


3360, 3361,  
3362, 3363

281

15-96

**H. M. SETIAN**  
PAPETERIE ET ATELIER DE RELIURE  
CONSTANTINOPLE  
Tchakmakdjilar Yokouch

2010



2001

No 148

ՄԵԼՔԻՍԵՅԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵԸՆՑ

այս

1053

ԵՐԿՈՒԽՕՍՔ

281.6

5-99

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԿՐԹԱԿԱՆ

ՎԻՃԱԿԻՆ ՎՐԱՅ



معاری نظارت جلیله سنک رخصتیه طبع اولنشد

Printed in Turkey

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1888

8582



3047

39



## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Մեր երկու բուքս , զոր այսօր կը հրատարակենք , մի հեղինակութիւն չ'է , այլ լոկ մի ստուերագիր այն սոսկալի հարուածին , զոր բանի մի տարի առաջ կըրէց Հայոց կրօնական եւ կրթական ազատութիւնն ի Ռուսաստան , եւ ամփոփումն այն ճշմարտութեանց , զորս մեզմէն առաջ շատերն շատ անգամ հռչակած են : Մենք նոր բան չ'ենք հրատակեր , այլ կ'արժարձենք միայն այն մեծ եւ սուրբ դատն , որ մեր կրօնական ինքնութոյն գոյութեան դատն է եւ որոյ պաշտպանութիւնն ամեն ճշմարիտ Հայ գաւակի անպայման պարտաւորութիւնն :

Այս դատն խղճի ու կրօնի ազատութեան եւ բարոյական ու մտաւոր զարգացման դատն է , որ սուրբ է , նուիրական է , հոգեւոր է եւ ամեն մարդկային կամ քաղաքական օրէնքներէ առաջ օրէնք ի :

Հայք իրաւունք կը համարին իրենց , որ Ռուսիոյ կառավարութիւնն բողոս Հայաստանեայց Ս. Եկեղեցին , իւր Հայրապետութեամբ հանդերձ , այն անկախ վիճակին մէջ , յորում էր 1836 բուականէն առաջ , բողոս եւ Հայոց Դպրոցներն այն իրաւասութեան ներքոյ եւ այն ուղղութեան մէջ , յորում էին յառաջ բան 1835 բուականն :

Այս իրաւունքն վայելած են Հայք ինչպէս Ռուսիոյ Տիրապետութենէն առաջ , նոյնպէս եւ Ռուսիոյ Տիրապետութեանն շրջանին մէջ , յառաջ բան յիշեալ բուականներն . Հայք այժմ եւս վարճ կամ պսակ չ'են խնդրէր իրենց վկայեալ հաւատարմութեան համար ,

այլ միայն պահպանել իրենց կրօնական անկախութիւնն, իրենց եկեղեցին, իրենց Լեզուն, առանց որոց, զիտեն թէ պիտի անհետին ու անյիշատակութեան մատնուին :

Ամեն Պետութիւնք, ուր որ Հայք կան, յարգած էւ պաշտպանած են այս իրաւունքներն . իսկ Օսմանեան Բարեխնամ Պետութիւնն, զոր շատ անգամ Ռուսիա տարապարտ՝ Քրիստոնէութեան հարստահարիչ ներկայացուցած է աշխարհի առջեւ, ո՛չ միայն լիովին պաշտպանած է մեր կրօնական եւ կրթական իրաւունքներն, այլ նորանոր արտօնութիւններ էւ պատրիարքական իշխանութիւն իսկ շնորհած է, մինչդէռ անհրճարին ցա՛ւ է տեսնել՝ թէ Ռուսիա կը մտադրէ սուրբկացնել էւ այլափոխել Հայոց Մեծ Պատրիարքութիւնն կամ ընդհանուր Հայրապետութիւնն, որ հաստատուած է Ռուսիոյ Քրիստոնէական դարձէն շատ դարեր առաջ :

Ռուսիոյ սոյն քաղաքականութիւնն ամենախորին վերքերով կը վիրաւորէ Հայոց սրտերն . քանզի Հայոց համար աշխարհի ամեն թանկութիւններէն թանկագին է իրենց եկեղեցին, որոյ մէջ ամեն ժամանակ գտած են էւ կը գտնեն հոգեւոր մխիթարութիւն էւ որոյ հովանւոյն ներքեւ պահպանուած է միշտ իրենց Լեզուն ու ազգային գոյութիւնն :

Հարկ չը կայ ընդարձակօրէն բացատրել թէ մենք ինչ որ կը խօսինք, ամեն Հայու դաւանութիւնն է, զոր կը կրկնենք . բայց ի հարկէ պարտք ունինք նաեւ մատնանիշ առնել այն դարմանն, որով կարող է բուժիլ այս խոր վերքն :


Այս մասին մեր համոզումն այս է, որ Օսմանցի Հայն պարտի խնդիրն իւր պարագայիւք հանդերձ ներկայացնել յոտս Գահոյից մեր Օգոստափառ Վեհա-

պետին՝ ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ - ԻՒԼ . ՀԱՄԻՏ կայսեր , որ կը փայլի այսօր իւր տիեզերահռչակ ժողովրդասիրութեամբ եւ արդարասիրութեամբ , եւ որոյ իմաստուն միջնորդութիւնն առ Տէրութիւնն Ռուսաց՝ կարող է բաղձացեալ արդիւնքն յառաջ բերել Հայոց համար :

Մեր սոյն առաջարկին վրայ , ինչպէս որ եւ մեր երկու խօսքի բովանդակ պարունակութեան վրայ , կը հրաւիրենք ամեն Հայու խորին ուշադրութիւն : Ժամանակն քանկ է , պէտք չ'է դանդաղիլ . քանզի կան կորուստներ , որ անդառնալի են առյապապ : Մենք կը հաւատանք՝ թէ շիջած չէ՛ Հայու սրտին մէջ այն նուիրական հուրն , որով վառեցան , բորբոքեցան Ըսհակ ու Մեսրոպ մշտնջենաւորել Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ եւ Հայ Լեզուի գոյութիւնն :

Այս հաւատով գրեցինք մեր երկու խօսքն :

Մ. Ե. Մ.





# ԿՐՕՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

ԵՒ

## ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻ ՋԱՅՈՑ

Ի Ռ Ռ Ի Ս Ա Ս Տ Ա Ն



Շատ անգամ գրած ենք Կրօնական Ազատութեան և Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ վերայ: Գրած ենք մեր եկեղեցական կոչումն ընդունելէն առաջ. գրած և խօսած ենք մեր եկեղեցական կոչման շրջանին մէջ:

1884 թուականի 12 Մարտի Համագումար ժողովոյն մէջ արտայայտած ենք մեր համոզումն Հայաստանեայց Եկեղեցւոյ և Հայրապետութեան բարձր նշանակութեան մասին՝ հետեւեալ ատենախօսութեամբ:

« Հա՛րբ իմ և Եղբա՛րք.

« Մենք գումարուած ենք այսօր մի մեծ պարտք կատարելու համար: Այս պարտքն է Կաթողիկոսական ընտրելեաց ցանկ պատրաստել և մատուցանել զայն Ազգային Երեսփոխանական Ժողո-

վոյն : Այս պարտուց կատարումն կը պարունակէ իւր մէջ՝ ամենամեծ պատասխանատուութիւն Աստուծոյ և Ազգին առջեւ :

« Ծանրակշիռ է Ժողովոյս վիճակն : Ազօթենք ուրեմն որ Հոգին Սուրբ օգնէ մեզ սուրբ սրտիւ և արթուն մտօք կատարելումեր պարաքն : Այո՛, մենք կաթողիկոս պիտի չ'ընտրենք , որ Ազգի Ընդհանրութեան գործն է . բայց ընտրելեաց ցանկի պատրաստութիւնն եւս ինքնին մեծ պատասխանատուութիւն կ'ենթադրէ . քանզի Ազգն մեր վրայ վստահելով՝ մեր ընտրածներէն պիտի ընտրէ Ընդհանուր Հայրապետն :

« Գիտէ՞ք արդեօք , թէ ո՛րչափ մեծ պատիւ է մեզ Ազգին սոյն վստահութիւնն , և ո՛րչափ արթնութիւն պէտք է մեր կողմէն Ազգի վստահութիւնը պսակելու համար : Գիտէ՞ք արդեօք թէ ո՛րչափ կարող է բարձրանալ մեր պատիւն ընդհանրութեան առջեւ , եթէ մենք աչալրջութեամբ և արդարութեամբ գործենք , և ո՛րքան կարող է նուազիլ՝ եթէ շեղինք արդարութենէ :

« Ո՞վ կայ մեր մէջ , որ չը փոփաքի եկեղեցականաց պատուոյ բարձրանալուն : Բայց փոփաքիլն բաւական չէ : Պիտի աշխատինք իրօք պսակել զայն : Պիտի աշխատինք , որ մեր քուէտրկած մէն մի ընտրելին կրէ յանձին՝ կաթողիկոսական կոչման էական պայմաններն :

« Էական պայմաններ ասացի , և անշո՛ւշտ առանց նպատակի չէ խօսքս :

« Շատերն շատ բան խօսեցան և գրեցին կաթողիկոսական արժանաւորութեան մասին . կը գովեմ՝ իրենց եռանդն . քանզի ամեն բաղձանք նշան է , որ Ազգն անտարբեր չէ իւր կաթողիկոսութեան մասին . Սակայն ես ընդունելով հանդերձ այլոց թուած կաթողիկոսական յատկանիշներն , ուրիշ մի առաւել կարեւոր կէտի վրայ պիտի հրաւիրեմ՝ Պատկառելի Ժողովոյդ ուշագրութիւնն , և այս մասին ի՛նչ որ պիտի խօսիմ՝ , բոլոր սրտէս պիտի խօսիմ՝ . ես ճարտասան չեմ՝ բայց խօսք մը չեմ՝ արտասաներ՝ որ իմ սրտէս բղխած չը լինի . և կը հաւատամ՝ որ դուք եւս այնպէս պիտի ընդունէք :

« Մենք սոյսօր մի բացառիկ կացութեան մէջ ենք , Հա՛րբ իմ և Եղբարք : Մեր եկեղեցականութիւնն այն բարձրութեան վերայ չէ , որուն համար սահմանուած է : Անիշխանութիւնն տիրած է

գրեթէ ամենուրեք : Մենք եկեղեցականքս , որ Եկեղեցւոյ շինուածի քարերն ենք , գողցես խախտուած ենք մեր տեղէն . և գիտէք անշուշտ՝ որ ամեն քար երբ իւր տեղէն ընկած է , կարող է դառնալ քար գայլթակղութեան : Նշյն իսկ մեր ժողովուրդքն՝ որ մեր Առաքելական Եկեղեցւոյն շինուածին նուիրական և մատուցիկ շաղախն է , մեր ժողովուրդն եւս Քրիստոնէական կրօնի նկատմամբ նախանձելի դրութեան մէջ չէ :

« Պարզ ասեմ , Հա՛րբ իմ և Եղբարք , ո՛չ մեր Կաթողիկոսներն՝ Սահակներ են , ո՛չ մեր Արքեպիսկոպոսներն ու Եպիսկոպոսներն՝ Յովսէփներ են , ո՛չ մեր Վարդապետներն՝ Մեսրոփներ , ո՛չ մեր Քահանայքն՝ Ղեւոնդներ , և ո՛չ մեր ժողովուրդն՝ Վարդանանց դարու սքանչելի ժողովուրդն :

« Ո՞վ է պատճառն այս անկման . եկեղեցակա՞նք թէ ժողովրդականք . — ո՛չ մին և ո՛չ միւսն առանձինն , այլ երկոքեան միանգամայն : Քանզի եկեղեցական և ժողովուրդ՝ մի Եկեղեցի կը կազմեն . և եկեղեցականութիւնն ո՛չ այլ ինչ է , եթէ ո՛չ ժողովրդէն ընտրուած մի պաշտօնէութիւն : Չ՛կայ եկեղեցականութիւն առանց ժողովրդեան , ինչպէս որ չ՛կայ Եկեղեցի կամ ժողովուրդ՝ առանց եկեղեցականութեան : Այս է Հայաստանեայց Եկեղեցւոյ առաքելական պաշտելի տիպն : Այս է Քրիստոնէութեան ճշմարիտ ոգին : Հետեւապէս , թէ՛ եկեղեցականք և թէ՛ ժողովրդականք շատ կը սխալին , երբ իրարու կը վերագրեն այն թերութիւններն , որք երկոցունց միանգամայն կը վերաբերին , և զորս կարելի է ուղղել միաձայն խոստովանութեամբ և աշխատութեամբ :

« Շատ կը սխալինք նմանապէս , եթէ ասենք՝ թէ ներկայ դարս՝ հալածանաց դար չէ , և ուրեմն Յովսէփներու , Ղեւոնդներու և Վարդանանց նահատակներու պէտք չ՛կայ :

« Քրիստոնէութիւնն նահատակութեան կրօնք է , Հա՛րբ իմ և Եղբարք : Քրիստոնէութիւնն արթնութեան կրօնք է : Եթէ չը կայ արտաքին թշնամի , անշուշտ կայ ներքին թշնամի , որ աւելի վտանգաւոր է քան զառաջինն :

« Ի՞նչ էր հեթանոսական դարերու հալածանաց նպատակն , եթէ ո՛չ խլել մեր սիրտն մեր Արարչէն , մեր կրօնքէն , մեր Եկեղեցիէն : Երբ կրօնական անտարբերութիւնն օր աւուր կը տիրէ ներկայ սերճոյն վերայ . երբ ստութիւնն , օտարամոլութիւնն , խա-

բէութիւնն որ աւուր կ'արատաւորեն մեր քրիստոնէական անբժու-  
թիւնն . երբ արտաքին և ներքին Աստուածապաշտութիւն , լա-  
ւ է ոսկի սիրտ և ծէս իրարու համապատասխան չեն . վերջապէս  
երբ 'ի Ռուսիա մեր կրօնական ազատութիւնն կը բռնաբարուի ,  
որ արիւննով և արտասուքով գնուած է , և Հայու համար միշտ  
ամեն ազատութիւններէն գերագոյնն համարուած է . միթէ այս  
ամենն ներքին հալածանք չե՞ն , և ո՞ւր է մեր հոգեւոր սպառա-  
զինութիւնն այս ամեն չարեաց դէմ : Ո՞ւր են մեր հոգեւոր զէն-  
քերն — Հաւատոյ վահանն , Յուսոյ զրահն և Ռիտոյ ասպարն :  
Միթէ բաւակա՞ն են միայն եկեղեցական հագուստն ու տարազն :  
Ո՞ւր է մեր կենդանի զինուորութիւնն . միթէ մենք այն Մեծ  
Զօրագլխին զինուորներն չե՞նք , որ յառաջելով 'ի Ռաչ , յառա-  
ջելով 'ի զոհ անձին , խրախոյս կարգաց մեզ ասելով . « Քաջալե-  
րացարո՛ւք , զի ես յաղթեցի աշխարհի » : Ո՞ւր է մեր պատերազմն  
խաւարի դէմ , ստութեան դէմ , անտարբերութեան դէմ , նիւ-  
թապաշտութեան դէմ , մելութեան դէմ , մելորութեան դէմ :  
Ո՞ւր է մեր արթնութիւնն . ո՞ւր է մեր քաջութիւնն : Միթէ մեր  
խորհրդածութեան գլխաւոր նիւթն պիտի չը լինի՞ն այս ամենն ,  
մանաւանդ ներկայ պահուս մէջ :

« Կը տեսնէք ահա՛ , թէ ո՞ր տեսակէտէն նայելու ենք կաթո-  
ղիկոսական ընտրելեաց արժանեաց վրայ : Կը տեսնէք՞ թէ ի՞նչ  
ոգի պիտի ոգեւորէ զմեզ՝ մեր Եկեղեցւոյ և եկեղեցականաց վի՞-  
ճակն բարձրացնելու համար :

« Մենք պիտի հաւատանք , Հա՛ւրք իմ և Եղբա՛ւրք , որ մեր  
Եկեղեցին՝ մեր ազգային միութեան յօդակապն է : Պիտի հաւա-  
տանք՝ որ մեր Եկեղեցին մեր հոգեւոր հոյրենիքն է , չ'ասեմ աւե-  
լի : Պիտի հաւատանք որ Եկեղեցին՝ այն փրկարար տապանն է ,  
որով պահպանուած է մեր Ազգի գոյութիւնն պատմական աշխար-  
հաստան հեղեղներուն ժամանակ , և կարող է պահպանուիլ այ՞-  
ժըմ՝ և յաւիտեան : Պիտի հաւատանք որ մեր Եկեղեցին մեր ըզձից  
կեդրոնն է , և ահա՛ այս հաւատով և այս համոզմամբ պարտինք  
ձեռնարկել ընտրութեան :

« Ուրեմն , ա՛յն անձն , որ կարող է ամբացնել այս յօդակապն  
և պայծառացնել սոյն հոյրենիքն , ա՛յն անձն՝ որ կարող է իւր  
սիրով , իւր անձնուիրութեամբ , իւր արթնութեամբ կեդրոնա-

ցընել մեր ցիրուցան Ազգի սիրտն ու միտքն այս կեդրոնին մէջ :  
ա՛յն անձն՝ որ իւր լուսով , իւր կեանքի օրինակով կարող է ա-  
ռաջնորդել եկեղեցականին և ժողովրդականին , կարող է զօրա-  
ցընել այն հոգեւոր միութիւնն , որ կը կոչուի Եկեղեցի . ա՛յն  
անձն՝ որ վառուած է սոյն հոգւով և պատրաստ է նկատել զինքն  
ո՛չ միայն Հայրապետ՝ Հայրապետական Աթոռոյն վերայ , այլ մա-  
նաւանդ զը՛հ ազգային սիրոյ սեղանին վրայ . ա՛յն անձն է ա-  
հա՛ Աստուծո՛վ կոչուածն : Նա է ճշմարիտ ընտրելին : Նա է ար-  
ժանին Ազգի ձայնին :

« Այս հոգին պիտի առաջնորդէ մեզ ահա՛ մեր ընտրութեան  
մէջ : Աստուծոյ օրինաց պահպանութեան սէրն և մեր Եկեղեցւոյ  
պայծառութեան նախանձախնդրութիւնն պէտք է ուղեցոյց ի-  
նին մեր խորհրդոց և գործոց :

« Արդ՝ կ'աղաչեմ՝ զձեզ , Հար՛ք իմ՝ և Եղբա՛րք , կ'ա-  
զերսեմ՝ թախանձագին , որ խորհիք , լա՛ւ խորհիք թէ՛ ի՞նչ  
մեծ պատասխանատուութիւն կայ ներկայ Համագումար Ժո-  
ղովոյս վրայ՝ Աստուծոյ առջեւ , Ազգին առջեւ , Պատմու-  
թեան առջեւ : Այսօր մեր Եկեղեցւոյ համօրէն զաւակներն  
մեր բովանդակ Ազգն՝ ակնապիշ կը սպասեն Ժողովոյս ար-  
դեանց : Վ՛կայ է այս բանին մեզ շրջապատող հազարաւոր բազ-  
մութիւնն , որոյ երեւոյթն իսկ և հետաքրքրութիւնն մեծ միտ-  
թարութիւն է մեզ , որով՝ կ'երեւի թէ՛ ժողովուրդն անտարբեր չէ  
մեր ընտրութեան . Ամեն սրտեր կը բաբախին , ամեն մտքեր կը  
յուզին , ամեն կուրծք կը արօփէ , ամեն Հոյ կ'ակնկալէ : Կը  
կրկնեմ . ի՞նչ որ սկզբան խօսեցայ . արդարեւ մենք Հայրապետ  
պիտի չ'ընտրենք , բայց մեր կազմած ընտրելեաց ցանկն մեծ կա-  
րեւորութիւն ունի բուն Հայրապետի ընտրութեան նկատմամբ :

Մենք Եկեղեցւոյ պաշտօնեայ ենք . մենք օրինաց և կանոնաց  
աւանդապահ ենք . մենք ճշմարտութեան համար որոշուած վը-  
կաներ ենք . մենք Աստուծոյ թագաւորութիւնը յառաջացնելու  
համար՝ ընտրուած զինուորներ ենք . մենք լուսոյ սպասուորներ  
ենք : Եւ ահա՛ այսօր կոչուած ենք Ազգին ցոյց տալու , որ մենք  
կը ճանաչենք մեր կոչումն , կը գնահատենք մեր պարտաւորու-  
թիւնն և կը պատուենք Ազգի վստահութիւնն :

« Աւրեմն , Աստուծոյ Հոգին ունենանք մեզ առաջնորդ , և մեր  
Եկեղեցւոյ ընդհանուր շահն՝ կէտ նպատակի : Այո՛ , մենք հոգ

ենք և մոխիր Աստուծոյ առջեւ , բայց պէտք է իմանանք , որ Աստուած շատ անգամ հոգէն իսկ կաւ կը կազմէ կոյրերու աչքը լուսաւորելու համար : Աշտահի՛նք Աստուծոյ ամենակարողութեանն , ապաւինի՛նք նորա իմաստութեանն որ ուղղէ և յաջողէ մեր ձեռաց գործն : Ամիոփութի՛նք մեր խղճի ազատութեան խորանին մէջ , ամիոփութի՛նք մեր սրտի խորութեան մէջ , հաւատալով որ կը փառաւորուի Աստուած , նշանաբան ունենալով մեզ այս սուրբ խօսքն . « Մատիցէ՛ սյր 'ի խորութիւն սրտի իւրոյ և բարձր եղիցի Աստուած » :

Իսկ այս Համադումարի թուականէն 17 տարի առաջ՝ ուսուցչութեանս ժամանակ երկասիրած և վարդապետական կոչմանս մէջ հրատարակուած Եկեղեցական Պատմութեանս վերջին տողերն այս խօսքերով կնքած եմ . « Մենք կը հաւատանք և կը խոստովանինք որ ճշմարիտ իրաւունքն մահ՛ չ'ունի , և հայկական ներկայ սերունդն կարող չէ անտարբեր աչօք նայիլ իւր բազմադարեան և բազմաչարչար Մօր վիճակին վրայ . յուսով եմք , որ մեր Եկեղեցւոյ իրաւանց պաշտպանութիւնն , յարատեւութիւնն և քրիստոնէական բազմարդիւն պայծառութիւնն պիտի մնայ իրրեւ առաջին նուիրական պարտք թէ՛ ներկայ և թէ՛ ապագայ սերնդին համար , և ո՛ր կաթողիկոսն որ աջակցի այս մեծ գործոյ արդիւնաւորութեանն՝ դարուցի դարս օրհնութեամբ պիտի յիշուի իւր անունն ու յիշատակն » :

Այս տողերն գրած և դասախօսած ժամանակ երբէք չէր անցներ մտքէս՝ թէ մի օր ես ո՛չ միայն վարդապետական կոչումն պիտի ընդունիմ՝ , այլ և կաթողիկոսական ընտրելեաց ցանկն պիտի անցնիմ , այլ և Ս. Էջմիածնի Համազգային Ընտրողական Ժողովոյ միահամուռ ձայնիւ պիտի արժանանամ կաթողիկոսա-

կան կոչման , և ո՛չ միայն Հայոց Եկեղեցւոյ զաւակներէն , այլ և օտարներէն շնորհաւորական հեռագրեր և գրեր պիտի ընդունիմ սոյն կաթողիկոսական ընտրութեան համար :

Անակնկալ դէպքերն խոր տպաւորութիւն կ'ազդեն : Այս տպաւորութեան ներքոյ էի և ես , երբ ի հեռուստ և ի մօտուստ սրտայոյզ բաղձանքներ և խորհուրդներ կը հաղորդուէին ինձ :

Հայութիւնն իւր սիրտն կը բանար իմ առջեւ : Կը զմայլէի , որ Հայութիւնն կենդանի սիրտ ունի , բաղձանքներ ունի . բայց միանգամայն տկարութիւնս զգալով՝ կը շուարէի , կը տատամսէի , կը յուզուէի և ուրախական ժպիտներս խառն էին արտասուաց կաթիլներով : Մի կողմէն կը մտաբերէի հրաժարիլ և խոյս տալ այս մեծ կոչումէն . միւս կողմէն կը յիշէի 16 տարի առաջ հրատարակած իղձերս ու յոյսերս և կը խորհէի թէ՛ գուցէ Նախախնամութիւնն կամի իմ գրածներս կաթողիկոսութեան մասին իմ ձեռքովս իրագործել :

Չը մոռնամ ասել , որ սոյն մտախորհութեանս մէջ անընդհատ կը հասնէին զգայուն և խոհուն անձանց գրեր , որոնք կ'երգուեցնէին զիս անսալ Ազգի միահամուռ ձայնին և չը հրաժարիլ : Մին կը գրէր . « Չը լինի թէ հրաժարիք այս վեհ աստիճանէն , օ՛ն անդր , բոլոր Հայերիս շինքն (վիզն) կը կտրէք : » Միւսն կը գրէր . « Չը հրաժարիք , Սրբազա՛ն , Աստուծոյ զօրութիւնն և Նորա աջն ձեր վերայ է միշտ » : Երրորդն կը գրէր . « Մի՛ գուցէ մերժէք Ազգի ընտրութիւնն . մի՛ արասցէ Տէր , մեծ հարուած տուած կը լինիք Ս . Աթոռին : » Թողունք ասել , որ շատերն

մինչեւ անգամ խորհրդածութեան յատակադճեր կը հաղորդէին ինձ դժուարութիւններ հարթելու և գործունէութեան ճանապարհն յարդարելու համար :

Այսպիսի խրախոյսներ ու յոյզեր և շատ բաղձանքներ ու ակնկալութիւններ կը քաջալերէին զիս , կ'ոգեւորէին զիս , և ես տեսնելով Ազգի կամքն ու սիրտն ինձ հետ՝ կը խոնարհէի հպատակիլ այս կամքին և հրաժարման խնդիր չը յարուցանել :

1885 թուականի Ապրիլի 21էն ի վեր , որ Սուրբ Էջմիածնի Համազգային Ժողովոյ ընտրութեան օրն էր , ամիսներ անցած էին : Ազգն կ'սպասէր . իսկ ես մենաւոր լուութեան մէջ կ'աղօթէի և ծրագրեր կը պատրաստէի առաջիկայ ասպարիզին համար՝ թէ ի՞նչ պէս պէտք է սկսիլ և ի՞նչպէս պէտք է շարունակել , որ պսակուի Ազգի կամքն , պսակուին Ազգի բաղձանքներն ու ակնկալութիւններն :

Յանկարծ հեռագիրն յայտնեց թէ Օգոստոսի 23ին , Ռուսիոյ Կայսրն Կաթողիկոս անուանած է Վիակար Արքեպիսկոպոսն՝ Առաջնորդն Նախիջևեանի և Բեսարարիոյ : Այս լուրն իսկոյն տարածուեցաւ ամեն տեղ : Սկսան խօսիլ և գրել Կաթողիկոսական խնդրոյն սոյն տարօրինակ դարձուածին վերայ : Իսկ ես խոհեմութիւն համարեցի լռել , որպէս զի խնդիրն անձնականութեան չը վերածուի , այլ յուզուի , քննուի եւ կարգադրուի իւր ընդհանրական սահմանին մէջ . քանզի այլ ևս լոկ Կաթողիկոսական ընտրութեան խնդիր չէր , այլ Եկեղեցւոյ իրաւանց խնդիր , Եկեղեցւոյ եւ Կրօնի ազատութեան խնդիր :

Ազգն կը յուսար անշո՛ւշտ՝ թէ այսպիսի մի մեծ

և բարձր խնդրոյ համար մեծ միջոցներ պէտք է ձեռք առնուին : Ազգն , մանաւանդ Ռուսաստանեայք , կը յուսային թէ Պօլսոյ Ս . Պատրիարքն Տ . Յարութիւն Վեհապետեան , կրօնական ազատութեան այս մայրաքաղաքին մէջ , Հայոց Եկեղեցւոյ ազատութեան խնդիրն՝ Երեւոյթխանական ժողովոյ սահմանէն աւելի բարձր խնդիր նկատելով՝ պիտի հրաւէր կարգայ Հայութեան , պիտի իւր շուրջն բոլորէ հմուտ եկեղեցականներ և աշխարհականներ , և ինչպէս երբեմն Սուրբըն Յովսէփ , ի թագաւորանիստն Արտաշատ ,՝ եպիսկոպոսօք , քորեպիսկոպոսօք , պատուական երիցամբք և հանդերձ սուրբ ուխտիւն Եկեղեցւոյ և հաւանութեամբ մեծամեծ նախարարացն և ամենայն բազմութեամբ աշխարհին , պատասխանեց Յազկերտին , ինքն ևս Պատրիարքն օրինական ճանապարհաւ պիտի պատասխանէ Ռուսիոյ Կառավարութեան և պիտի պաշտպանէ Եկեղեցւոյ ազատութիւնն : Քանզի խնդիրն ներկային մէջ ևս նոյն էր , ինչ որ էր հինգերորդ դարուն մէջ , այն է՝ զԱզատութիւն Եկեղեցւոյ արկանել քնդ ծառայութեամբ :

Ազգն կսպասէր՝ թէ Սրբազան Պատրիարքն Եկեղեցւոյ ազատութեան ոգւով ոգեւորուած՝ պիտի ոգեւորէր նաև ամենէն սառնասիրտներն ու անտարբերներն . բայց , աւա՛ղ , երեւի թէ չիմացաւ նա թէ ի՞նչ է Եկեղեցւոյ Ազատութիւնն . քանզի գործիք դաւ , քան թէ տէր իւր կոչման և պաշտօնին : Զիջաւ ժողովրդի տեսութենէն թագուցանել իւր կրօնական Ազատութեան խնդիրն . զիջաւ ոստիկաններով շրջապատել տալ Ղալաթիոյ Ս . Լուսաւորիչ Եկեղե-

ցին<sup>(1)</sup>, ուր գումարուած էր Երեսփոխանութիւնն . զիջաւ Տաճարի պարսպաց դռներն անգամ փակել ժովրրդեան առջեւ . և այսպէս ժողովրդի աչքէն անթափանց և սրտէն հեռի ժողովոյ մէջ՝ քառասնից ձայնիւ որոշեց, հակառակ Հայաստանեայց Եկեղեցւոյ դարաւոր իրաւանց, օտարոտի եղանակաւ ընդունիլ Մակարի օտարոտի ընտրութիւնն, և սոյն որոշումն ցնծութեամբ հեռագրել առ Մակար, որ արդէն կանխաւ իսկ ապահովուած էր:

Տարակոյս չկայ, որ քառասնից սոյն դռնփակ որոշմամբ խնդիրն փակուած չէ Հայոց Եկեղեցւոյ զաւակներուն համար: Տարակոյս չկայ, որ Կրօնական Ազատութեան խնդիրն՝ Ազգային կենաց և դոյութեան խնդիր է Հայուն համար, և այնպէս իսկ միշտ պիտի մնայ, քանի որ Հայ կայ աշխարհի վերայ: Բայց տարակոյս չը կայ նմանապէս, որ իբր սեաւ բիծեր պիտի մնան Հայոց Եկեղեցւոյ Պատմութեան մէջ հետեւեալ երեք կէտերն: — Ա. Մակարի կաթողիկոսական կոչումն ընդունիլն Ռուսիոյ Տարէն՝ հակառակ իւր եկեղեցական ուխտին եւ ընդդէմ Հա-

---

[1] Ոստիկանութեան Պետն Ժողովէն զկնի միայն իմացած է, թէ խարուած է ինքն . քան զի իրմէն կարգապահութեան համար միայն զինուորներ խնդրած են . բայց ուրիշ նպատակի ծառայեցուցած են զինուորներն, այսինքն արգելուն ժողովուրդն որ ժողովատեղին չխուժէ և Մակարի օտարոտի ընտրութեան դէմ ազազակներ չը բառնայ: Խեղճ ոստիկաններն մինչեւ անգամ քանի մի ազնիւ երիտասարդներ բանտ տարած են չ'իմանալով որ իրենց Եկեղեցւոյ իրաւանց պաշտպանութեան համար կուզեն Ս. Լուսաւորչի գաւաթն մտնել և ո՛չ թէ կարգապահութիւն խանգարելու:


յոց Եկեղեցւոյ ընտրական իրաւանց և օրինաց : —  
 Բ. Յարուժիւն Սրբազան Պատրիարքի լուսթիւնն այն  
 հրապարակական հարցման դէմ, զոր կ'ուզէր առ  
 նա ծերունազարդ Երեսփոխանն Քրիստոսաւոր թէ՛  
 Ս. Պատրիարքի խիղճն, հաւատարմութեան ուխտն  
 և Հայոց Եկեղեցւոյ օրէնքն կը ներե՞ն իրեն՝ ճանա-  
 չել Մակարի կաթողիկոսութիւնն : — Գ. Քառասուն  
 Երեսփոխանաց վարանումն, որոնք Ազգին Ընտրելոյն  
 կաթողիկոսութիւնն Երեսփոխանական Ժողովոյ մէջ  
 հրապարակաւ հռչակելէն և շնորհաւորելէն զկնի՝  
 չ'արխացան մերժել Մակարի օտարոտի ընտրութիւնն  
 որոյ անունն անգամ իրենց ընտրելեաց եռանուն ցան-  
 կին մէջ մտած չէր :

Թո՛ղ փաստաբանեն որոնք որ կամին. թող բա-  
 ցառիկ պարագայից ծնունդ՝ բացառիկ կարողիկո-  
 սութիւն անուանեն Մակարի կաթողիկոսութիւնն :  
 Թո՛ղ լուան իրենց ձեռքերն՝ որչափ և կամին՝ անմեղ  
 հռչակուելու համար. ո՛չ իրենց խիղճերն կը մաք-  
 րուին, և ո՛չ իրենց ձեռքերն, որով մեղանշեցին իրենց  
 Եկեղեցւոյ Ազատութեան դէմ, որ գին է արեան  
 Գողգոթայի Նահատակին, գին է արեան հազարաւոր  
 նահատակաց և մարտիրոսաց :

Բայց մենք Պատմութեան թողո՛ւնք այս տխուր  
 անցից տխուր և դառն յիշատակն, և վերստին դառ-  
 նանք էական խնդրոյն, որ է Կրօնական Ազատու-  
 թիւնն, Եկեղեցւոյ ազատութիւնն :

1800 տարիէն աւելի է, որ Հայաստանեայց Ս.  
 Եկեղեցին գոյութիւն ունի աշխարհիս վրայ : 1800  
 տարիէն աւելի է, որ կը գիտնամարտի Կրօնի ազատու-

3047  
39



Թեան և իւր Առաքելական իրաւանց համար : Կը դիմամարտի Հաւատոյ համար, Սիրոյ համար, քանզի այս երկնաշունչ ազատութեամբ միայն կարելի է ճշմարտապէս հաւատալ, անսահման սիրել : Չը կայ Արեւելից մէջ մի ազգ, որ ա՛յնքան մեծ նշանակութիւն տուած լինի Կրօնական Ազատութեան՝ ինչպէս է Հայոց ազգն : Հայ ազգն ամեն բան զոհած է այդ ազատութիւնն սրահպանելու համար. բայց այս մեծ զոհով պահպանուած ազատութիւնն ևս մեծ պահած է Հայու անունն Քրիստոնէական Կրօնի Տարեգրութեանց մէջ : Հայ ազգն միշտ իւր դաւանած Քրիստոնէական կրօնի ոգւոյն և սկզբունքին համաձայն գիտցած է հատուցանել Աստուծոյն՝ Աստուծոյ և Կայսերն՝ Կայսեր : Հայք բռնաւոր ու կրակապաշտ Յազկերտին անգամ կրկնած են. « Եթէ սովին հաւատովք թողուս, ո՛չ յերկրի այլ տէր փոխանակեմք ընդ քեզ և ո՛չ յերկինս այլ աստուած փոխանակեմք ընդ Յիսուսի Քրիստոսի : » (ԵՂ.ԵԵ Բ. ՅԵՂ.ԱՅԱԿ) :

Այս եղած է Հայ ազգի նշանարանն ամեն ժամանակ, այսինքն յօժարած են ամեն թագաւորի, ամեն իշխանութեան հնազանդիւ, միայն թէ իրենց կըրօնն, իրենց Եկեղեցին անբռնաբարելի մնան և ազատ միայն թէ քաղաքականութիւնն մուտ չը գործէ իրենց կրօնական միութեան և ազատութեան սրբավայրն. քանզի դաւանած են այն մեծ ճշմարտութիւնն թէ՛ Կրօնական Ազատութեան մէջ միայն կը ցոլանայ մարդոյ բովանդակ կեանքն, և մարդոյ կենաց մէջ է, որ կը ցոլանայ Կրօնն : Ամեն դարեր կը վկայեն՝ թէ մարդկային ազգի պատմութեան ամենէն մեծ երե-

ւոյթներն ծնունդ են կրօնական մտածութեան, կրօնական ոգեւորութեան: Հայ ազգի ընտիր եկեղեցականներն՝ կրօնի և Եկեղեցւոյ ազատութեան պերճախօս ասոյեաններ եղած են: Հայ ազգի ամենէն ընտիր զաւակներն՝ կրօնի ազատութեան նահատակներ եղած են: Հայոց աշխարհի փափկանուն Տիկնայքն անգամ կրօնական Ազատութեան մարտիրոսուհիներ եղած են: Ծշմարիտ Հայն, ազնիւ Հայն, քրիստոնեայ Հայն միշտ իւր նախնեաց Հանգանակն կրկնած է, «Հայր մեր զԱւետարանն գիտեմք և Մայր զԱռաքելական Եկեղեցի Հայաստանեայց. մի՛ ոք չար անջրպետ ի մէջ անկեալ զմեզ քակտեսցէ ի ամանէ»: (Եղևե Գ. 86Գ.)

Հայն Աւետարանն իրեն Հայր զաւանած է և եկեղեցին՝ իրեն Մայր. և երբէ՛ք չէ բաժնուած այս Հօրէն ու Մօրէն: Հայք ուխտեցին, որ իրենց նահատակութիւնն շարունակուի մինչեւ ի գալուստն երկրորդ, և իրենց ազազակն այս եղաւ. «Հաճեսցի՛ Աստուած կամաւոր պատարագաւս (նահատակութեամբ), և մի՛ տացէ զեկեղեցի իւր ի ստրկութիւնն» (Եղևե Ե. 86Գ.)

Ի՞նչ էր Եկեղեցւոյ ազատութիւնն, որոյ սիրովն այնքան վառուած էին Հայք, և ի՞նչ էր ստրկութիւնն, յս՛րմէ այնքան կը սոսկային: Ահա այս մեծ խնդիրն է, զոր պիտի պարզենք Հայոց Եկեղեցւոյ զաւակներուն առջեւ, աղօթելով որ ամեն Հայ սրտի վրայ ա՛յն ազդեցութիւնն ունենայ, որոյ տպաւորութեան ներքոյ կը գրենք մենք, ո՛չ իբր լոկ խօսք ներկայացնելով հրապարակի վրայ, այլ իբր մեր բեկուած սրտի բեկորներն ու կտորներն:

Քրիստոնէութիւնն օրէնք է կառարեալ ազատութեան (ՅԱԿ. Ա. 25) . իսկ քրիստոնէական Եկեղեցին է մի հաստատութիւն՝ հիմնուած այս ազատութեան վերայ : Հետևաբար կրօնական ազատութիւնն է կեանք Քրիստոնէական կրօնի և Եկեղեցւոյ : Մի Հայ դրադէտ ասած է . « Արտաքոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ չիք Հայութիւն (1) » . իսկ մենք կը յաւելունք թէ՛ բայց առանց կրօնական ազատութեան ևս չիք Եկեղեցի : Եկեղեցւոյ ազատութիւնն չը նմանիր բնա՛ւ քաղաքական ազատութեան : Եկեղեցւոյ ազատութիւնն այն կենդանարար զօրութիւնն է , որով մարդոյ հոգին կը հրճուի անայլայլելի ցնծութեամբ , միտքն կը պարարի անմոլար ճշմարտութեամբ և սիրտըն կը ցոլանայ սրբութեան և շնորհաց զմայլելի ցոլմունքներով : Եկեղեցւոյ սոյն սքանչելի ազատութիւնըն էր , զոր կը փառաւորէին , զոր կը հռչակէին մեր Նախնիք , Յազկերտի հալածանաց դարուն մէջ , ազազակելով . « Եկեղեցիք ո՛չ են պարգեւք թագաւորաց , և ո՛չ արուեստ ճարտարութեանց , և ո՛չ գիւտք իմաստնոց , և ո՛չ աւար քաջութեան զինուորաց . . . . այլ շնորհք են մեծին Աստուծոյ , ո՛չ միում ումեք ի մարդկանէ տուեալ , այլ ամենայն բանաւոր ազգաց , որք վիճակեալք են ի բնակութիւն ի ներքոյ արեգականս » : (ԵՂ.ԻՅԷ. Բ. 86Գ.՝)

Կրօնական ազատութիւնն , ինչպէս կը սահմանեն նշանաւոր հեղինակներ , կրկին է — ներքին կամ անհատական , որ կը կոչուի խղճի ազատութիւն , ո-

[1] Յառաջ . Պատմ. Բռնի Միութեան Հայոց Լեհաստանի ընդ Եկեղեցւոյն Հռովմայ : Ս. Պետր. 1884 :

րով իւրաքանչիւր ոք իւր ազատութեամբ կապուած է Աստուծոյ հետ . և արտաքին ազատութիւն , որ կը կոչուի ազատութիւն պաշտամանց , որով շատ մարդիկ կամ մի ժողովուրդ , մի ազգ իւր յատուկ հանդէսներով , նշաններով , ժամանակներով , տեղով , խօսքով , ծէսով կը կատարէ իւր Աստուածապաշտութիւնն : Եթէ մարդն միայն լինէր , իւր պաշտամունքն շատ պարզ կը լինէր . բայց երբ մարդ իւր նմանեաց հետ կը միանայ , պաշտաման ձեւերն ևս կը շատնան : Մարդն իւր ընտանեաց վերայ ներգործութիւն ունենալու համար աւելի ձեւերու կը կարօտի քան թէ լոկ իւր անձին վրայ : Արտաքին ձեւերն կը բազմանան և ծէսերն աւելի հանդիսաւոր կը լինին , երբ պաշտամունքն մեծ բազմութիւն կը համախմբէ : Այս ձեւերն կը լինին տեսանելի կապ մի հասարակութեան , մի ազգի : Նոքա կը միանան կրօնի վարդապետութեան հետ , և սոյն վարդապետութեան հետ հաւատոյ ծիսական մասն կը կազմեն : Նոքա զգալի կերպիւ կրօնքն կը ներկայացնեն տգէտներուն անգամ . և ահա այս արտաքին պաշտամունքն իսկ թանկագին դառնալով ժողովրդեան համար , ինչպէս վարդապետութիւններն , կը պահանջէ կրօնական ազատութիւն : Եթէ խղճի ազատութիւնն անհատի իրաւունքն է , անշուշտ պաշտաման ազատութիւնն եւս իրաւունք է հասարակութեանց , իրաւունք է ժողովրդոց : Այս իրաւունքով նոքա անկախաբար կը կատարեն իրենց կրօնական արարողութիւններն . և այս արարողութեամբ կը պահպանեն իրենց հաւատն և հասարակաց ջերմեռանդութիւնն : Անշուշտ մեր խօսքն բուն պաշտամանց

վրայ է, որոնք կրօնի անբաժան մասն կը կազմեն, ինչպէս որ խօսքն կամ բանն մասն է մտածութեան. քանզի ինչպէս որ մտածութիւնն կը յայտնուի խօսքով, նոյնպէս կրօնքն եւս կը յայտնուի պաշտամունքներով: Սղճի և պաշտամանց ազատութիւնն անբաժան են իրարմէ. անհնար է մին ընդունիլ և միւսն զլանալ, քանզի ճիշդ այնպէս կը լինի, եթէ մտածութեան ազատութիւնն ընդունուի և խօսելու ազատութիւնն զլացուի:

Հետեւապէս մի և նոյն են խղճի և պաշտամանց ազատութիւնն, և սոյն միութիւնն է ահա՛, որ կանուանի կրօնական Ազատութիւն. որ է ազատօրէն խոստովանիլ իւր Հաւատոյ դաւանութիւնն և ազատօրէն կատարել իւր պաշտամունքն: Այս ազատութիւն ամէն անհատի և հասարակութեան իրաւունքն է. իսկ այս ազատութիւնն պաշտպանելն ամեն Տէրութեան պարտաւորութիւնն: Գիտենք արդէն, որ քրիստոնէական հասարակութիւններն կամ ազգերն մեծ մասամբ կը տարբերին իրարմէ դաւանութեան և պաշտամանց նկատմամբ. ինչպէս որ կրօնական ազատութեան դէմ է եթէ մի հասարակութիւն միւսի պաշտամանց բռնանայ, նոյնպէս դէմ է եթէ որ և է իշխող Տէրութիւն այդպիսի բռնաբարութիւն գործ դնէ:

Քրիստոնէութիւնն բոլորովին հակառակ լինելով կռապաշտութեան, հեթանոսական դարուց կրօնական ազատութեան Մշնամիքն կը ջանային ամբողջ քրիստոնէական կրօնքն բառնալ՝ քրիստոնեայներն ջնջելով. մինչեւ անգամ մի Հռովմայեցի կայսր կը

ժափագէր որ բոլոր քրիստոնեայքն մի գլուխ ունե-  
նային , որ կտրէր և ազատուէր : Բայց քրիստոնէա-  
կան կրօնի ազատութեան քրիստոնեայ թշնամիքն ու-  
րիշ եղանակ ունին . նոքա ջանահնար եղած են և կը  
լինին տարբեր հասարակութեանց , տարբեր ազգու-  
թեանց յատուկ պաշտամունքներն վերցնել և իրենց  
ունեցածին հետ համաձուլել : Հեթանոսութեան մէջ  
արտաքին հալածանք կար , սուր կար , տանջանարան  
կար , մահ կար , և քրիստոնէից կողմէն նահատակու-  
թիւն կար , մարտիրոսութիւն կար , որով և ոգեւորու-  
թիւն կար , ջերմեռանդութիւն կար , կենդանութիւն  
կար : Իսկ քրիստոնէութեան չրջանին մէջ՝ քաղաքա-  
կանութիւն կայ , հոգիներու տիրապետութեան տենչ  
կայ , պաշտամունքներ բառնալու մեքենայութիւններ  
կան , որսալու հնարներ կան , խնամակալելու խոստում-  
ներ կան , որով և միւս կողմէն թուլութիւններ կան ,  
պատրանքներ կան , անտարբերութիւններ կան , սեպ-  
հական Ազգային Եկեղեցւոյ պաշտամանց արհամար-  
հանքներ կան , անդունդ կայ , կորուստ կայ , ազ-  
գութեան մահ կայ : Հեթանոսութեան դարուց մէջ  
և ո՛չ մի քրիստոնեայ հասարակութիւն ջնջուած է  
կամ կորուսած իւր էութիւնն . բայց քրիստոնէական  
դարուց մէջ խիստ շատ : Արտաքին և ներքին հալա-  
ծանքներն պէտք է իրարմէ զատեն մանաւանդ ա՛յն  
քրիստոնեայ հասարակութիւններն կամ ազգերն , ո-  
րոնք ուրիշ ազգի իշխանութեան ներքոյ կը գտնուին :  
Նոքա պէտք է իմանան , որ եթէ հեթանոսական դա-  
րուց մէջ կորուսած չեն իրենց էութիւնն , շատ դիւ-  
րութեամբ կը կորուսանեն քրիստոնէական դարուց

մէջ , եթէ կորուսանեն իրենց կրօնական ազատութիւնն ու անկախութիւնն :

Հետեւապէս քրիստոնէական ազատ կրօնի ազատ պահանջն է , որ տարբեր հասարակութիւնք երբէ՛ք չբռնանան իրարու կրօնական ազատութեան վերայ ո՛ր և իցէ պատրուակաւ կամ միջոցաւ : Այսպէս եւս ո՛չ քաղաքականութիւնն պիտի միջամտէ եկեղեցական պաշտօնէութեան գործերուն , և ո՛չ եկեղեցական պաշտօնէութիւնն պիտի խառնուի քաղաքական գործերու : Նոքա կարող են փոխադարձաբար իրարու օգնել , բայց ո՛չ երբեք իրարու գործերուն խառնուիլ : Քրիստոնէական կրօնի հիմնադիրն Յիսուս խոյս տուաւ յանապատ , երբ կամեցան զինքն թագաւոր կացուցանել :

Այսպէս ահա՛ ուղեցոյց ունենալով մեզ կրօնական ազատութեան ճշմարիտ սկզբունքն , և առաջի աջաց պատկերացնելով մեր Հայաստանեայց Ա. Եկեղեցւոյ 18 դարեան Պատմութիւնն՝ կը տեսնենք յայտնապէս , որ մեր Եկեղեցին լիովին վայելած է կրօնական ազատութիւն մինչեւ 1836 թուականն : Ամեն զոհողութիւն գործ դրած է ամեն քաղաքական միջամտութիւն մերժելու , և ինքն ևս իւր երկնաւոր Հիմնադրին հետեւելով՝ միշտ հեռացած է քաղաքականութեան խառնուելէ : Կարող եմք ի լուր աշխարհի համարձակ ասել , թէ Հայաստանեայց Եկեղեցին ա՛յն ճշմարիտ Առաքելական Եկեղեցին է , որ միշտ խղճի ազատութեան , կրօնական ազատութեան տիպարն եղած է : Ամեն հալածանք կրած է այս ազատութիւնն պահպանելու համար . բայց երբէ՛ք զիջած չէ իւր

Փետայի մատանիէն զատ ուրիշ մատանի անցնել իւր մատն . իւր Փետայի փշեայ պսակն փառք համարած է իրեն , և երբէ՛ք հետամտած չէ՛ քաղաքական թագի , նոյնպէս բնա՛ւ երբէ՛ք խարոյկ վառած չէ՛ ուրիշի կրօնական ազատութեան դէմ :

1836 թուականէն Ռուսիոյ քաղաքականութիւնն Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ մտած է , իւր քաղաքական նպատակին համար կարգադրած օրկերով : Նա մտադրած է 18 դարեան մի քրիստոնեայ ճշմարիտ եկեղեցւոյ հիմունքն խախտել : Հայոց Հայրապետական Աթոռն Ռուսիոյ տիրած հայկական հողին վերայ գտնուելով՝ Ռուսիա ինքն իրաւունք համարած է Հայոց Հայրապետութեանն տիրելով՝ Հայոց եկեղեցւոյն տիրել : Սկզբի օրէն մինչ ցարդ Հայք բողոքած են Ռուս կառավարութեան այս տիրապետական խնամակալութեան դէմ . բայց նա բնաւ կարեւորութիւն տուած չէ՛ : Ռուս կառավարութիւնն միաքն դրած է ջնջել այդ ինքնուրոյն եկեղեցին , այդ ճշմարիտ եկեղեցին , քաղաքական օրէնքներ դրնելով՝ նորա յաւիտենական օրէնքներուն տեղ : Հայք լոկ բողոքած են . իսկ Ռուս քաղաքականութիւնն իրօք իր նպատակին դիմած է : Կրօնական ազատութեան մեծ ախոյեանն Ներսէս Ե . Աշտարակեցի առ ժամանակ ինչ մէն միայնակ թումբ կանգնած էր Ռուսիոյ քաղաքական միջամտութեան . բայց երբ տապալեցաւ այդ թումբն , այլ ևս բաց մնացին Հայոց Հայրապետութեան դռներն : Ներսիսի յաջորդներն մինչև և անձամբ չենթարկեցան Ռուսիոյ քաղաքական հարուածներուն՝ չը զգացին թէ ի՛նչ է Ռուսիոյ նը-

պատակն : Հայք բողոքեցին , բայց Ռուսիա բնաւ յետ չը կասեցաւ . և մինչեւ ա՛յն աստիճան յառաջ գնաց , որ Հայոց Ազգի Ընտրեալն ի բաց թողլով՝ զՄակարն անուանեց կաթողիկոս , իւր յերկրած կանդիտատական օրէնքին վրայ յենլով , որոյ դէմ ո՛չ միայն ընդհանուր բողոքներ եղած էին , այլ Մատթէոսի ընտրութեան ժամանակ Տաճկաստանի ներկայացուցիչներն՝ Իշխան Թումանեանց և Գուրգէն-Բէգեանց՝ Տաճկաստանէն ընդունած իրենց 90 քուէն Մատթէոսին տալէն զկնի՝ հրաժարած էին , համաձայն ունեցած պատուէրին , ո՛ւմ և իցէ քուէ տալ իրր կանդիտատի : Նոյնպէս Գէորգ Գ. ի ընտրութեան ժամանակ՝ Տաճկաստանի պատգամաւորք , Ներսէս եպիսկոպոս Վարժապետեան և Յ . էֆ . Նորատունկեան պաշտօնապէս բողոքած էին Էջմիածնի Տաճարին մէջ և արձանագրած . « ԶԳէորգ ընտրեմք , բայց զկանդիտատօք ո՛չ ձանաչեմք » : Իսկ 1885ի Ապրիլի 21ի ընտրութենէն զկնի՝ ո՛չ ապաքէն ամեն պաշտօնական և ժողովրդական հեռագիրք շնորհաւորեցին զմեզ որպէս ընտրեալ կարողիկոս (1) իսկ զՄակար ո՛չ երբէք , վասն զի Հայոց խզճի , Հայոց սովորութեան ու համոզման դաւանութիւնն է , որ մի հաս կաթողիկոս կ'ընտրուի և ո՛չ երբէք երկու :

Վերջին պահուն , երբ կաթողիկոս կ'անուանէր զՄակար , Ռուսիա արգէն ապահով էր , արգէն գիտէր Տաճկաստանի գործող անձանց շատերուն կրօնական անտարբերութիւնն , և ոմանց հանդարտ խըղ-

---

[1] Տես ի Յաւելուածն :

ճով դիւրափոխութիւնն . գիտէր նաև խեղճ ժողովրդեան անմասնակցութիւնն : Ռուսոյ Կառավարութիւնն գիտէր մանաւանդ որ ես ևս պիտի չը կարողանամ ձայն բարձրացնել մեր Եկեղեցւոյ և Հայրապետութեան բռնաբարուած իրաւանց համար . քանզի ձայնիս ազդեցութիւնն կտրելու համար ամեն տեղ պիտի տարածայնէին թէ՛ Մեքիսիգոյ եպիսկոպոս իւր Կաթողիկոսութենէ զրկուելուն համար կը խօսի , և ո՛չ թէ Եկեղեցւոյ ազատութեան , և թերևս շատ միամիտներ իսկ դիւրաւ պիտի հաւատային : Հոզն պատրաստ էր Ռուս Կառավարութեան առջեւ , ուստի և բողոքովին յայն իւր ամփոփեց Հայրապետութիւնն , առ ոչինչ համարելով Ազգին Առաքելական դարաւոր ընտրական իրաւունքն :

Արդ՝ եթէ Ռուս Կառավարութիւնն տիրապետած է Հայոց Հայրապետութեան , տակաւին տիրած չէ անչո՛ւշտ Հայ սրտերուն . հետևապէս Հայաստանեայց Եկեղեցւոյ ամեն մի ճշմարիտ զաւակի պարտաւորութիւնն է ձայն բարձրացնել իւր Կրօնի և իւր Եկեղեցւոյ ազատութեան համար , հաւատացած լինելով թէ՛ ի՛նչ որ կարող է քաղցրացնել մեր վիճակն , ազնուացնել մեր էութիւնն , ապահովել մեր Ազգային ինքնագոյութիւնն , միով բանիւ ի՛նչ որ փափագելի է մի Հայու համար , բոլորն մեր Կրօնական Ազատութեան , մեր Քրիստոնէական Եկեղեցւոյ մէջ է . և աւանց այս ազատութեան կարող չէ ծաղկիլ մեր կրօնական ոգին , կարող չէ զօրանալ մեր բարոյական ոյժն :

Ես ահա երեք տարիէն աւելի լռելէն զկնի՛ կ'սկսիմ

ձայնս բարձրացնել Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ  
գատութեան համար, Կրսկսիմ խօսիլ, բայց մի միայն  
ճշմարտութեան համար, ո՛չ երբէք Մակարի անձին  
դէմ և ո՛չ բնաւ իմ անձին համար. քանզի Մակար  
արդէն այն օրէն կորուսած է իւր նշանակութիւնն  
Հայութեան և Հայ Պատմութեան առջև, որ օրէն  
որ իւր եկեղեցական կոչման և ուխտին հակառակ՝  
հպատակած է օտարի կամաց, և ոչ թէ Աստուծոյ և  
իւր Եկեղեցւոյ օրինաց. իսկ իմ անձիս նկատմամբ կը  
յայտարարեմ ահա՛ ի լուր բոլոր աշխարհի՛ թէ այն-  
պիսի մեծ և անակնկալ պատիւ տրուած է ինձ, որ  
իմ արժանաւորութենէս շա՛տ և շա՛տ բարձր է :  
Այս պատիւն է — իմ ամենասիրելի Ազգիս ՄԻԱԶԱ-  
ՄՈՒՌ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆ և Ռուսիոյ կայսեր ՄԵՐԺՈՒՄՆ :  
Երկուսն ևս մեծ պատիւ են ինձ, և ուրեմն անձնա-  
պէս բնա՛ւ, բնա՛ւ երբէք ցաւ չ'ունիմ, և ո՛չ իսկ  
վիրաւորուած եմ այն մատնիչներէն և դաւաճաննե-  
րէն, որոնք երկրորդական դեր միայն կատարեցին :  
Պիտի բարձրացնեմ ձայնս այն Ազգի Կրօնական Ա-  
գատութեան համար, որ իսպառ, սիրեց զիս իւր Ազ-  
գովին վստահութեամբ. պիտի բարձրացնեմ ձայնս  
այն բռնարարման դէմ, որ իսպառ, մերժեց Ազգիս ի-  
րաւունքն, իսպառ, մերժեց զիս : Եթէ Ռուս Կառա-  
վարութիւնն թոյլ չը տուաւ ինձ Կաթողիկոսական  
գահոյից բարձրութենէն լսելի առնել ձայնս իմ Եկե-  
ղեցւոյս ագատութեան համար, գահոյից պատուան-  
դանէն կարող եմ լսելի առնել իրբեւ խոնարհ պաշ-  
տօնեայ :

Ռուս Կառավարութիւնն կը կապտէ մեր Եկեղեց-

ւոյ իրաւունքն և քաղաքականութեան կ'ենթարկէ մեր քրիստոնէական ազատ եկեղեցին, որ իւր ազատութեան համար ամեն բան զոհած է: Նա ընդդէմ կը վարուի դարուս քաղաքակրթութեան, որ խղճի և կրօնի կատարեալ ազատութիւն կը քարոզէ: Նա ընդդէմ կը վարուի մանաւանդ Հայոց Ազգի հաւատարմութեան: Ռուսիոյ Ինքնակալն իւր եկեղեցւոյ վեհապետն է. այսինքն եկեղեցին հպատակած է քաղաքականութեան. բայց Հայք Ռուս չեն. և ո՛չ Ռուսիոյ միւս հպատակ ազգերն: Ռուս կառավարութիւնն պէտք է որ ազատ թողու նոցա խիղճն, նոցա կրօնքըն, նոցա դաւանութիւնն, աւանդութիւնն, պաշտամունքն, ծէսն, արարողութիւնն, ուսուցումն, որոնք այնքան էական են մի ազգի, մի հասարակութեան, որքան շնչառութիւնն՝ թոքերու կազմութեան, որքան բաբախումն՝ երակի արեան: Պէտք է ազատ թողու, քանի որ նոքա իրենց կրօնքով բնա՛ւ չեն խառնուիր Ռուսիոյ քաղաքական գործերուն. քանի որ իրենց մտքէն անգամ չ'անցնիր հաւատքի պատրուակաւ կառավարութեան քաղաքական իշխանութիւնն վրդովել: Յանուն արդարութեան պարտք կը համարինք ասել, որ Ռուս կառավարութիւնն մի ազգ կը ջնջէ երբ վրաց եկեղեցւոյն տիրելով՝ հետզհետէ կը վերցնէ նոցա եկեղեցիներէն ազգային լեզուն: Յանո՛ւն արդարութեան պիտի գոչենք, որ Ռուս քարոզիչներն շատ անարգ միջոցներով թուղափառութիւն կը ծաւալեն Կովկասեան ցեղերու մէջ: Յանուն Քրիստոնէական Կրօնի ամենավսեմ բարոյակրթիչ զօրութեան և յանո՛ւն մարդկութեան պիտի աղաղա-

կենք թէ՛ Ռուսիա այն օրէն՝ որ սկսած է իւր քաղաքական ափին մէջ ամբիօփել Ռուսական Եկեղեցւոյ հոգեւոր իշխանութիւնն , աւելի ոյժ տուած է անկրօնութեան , փարիսականութեան , անբարոյականութեան . և եթէ հասարակ ժողովրդեան մէջ մնացած աւանդական Քրիստոնէութիւնն ևս չը լինի (որ դժբաղդարար շատ տեղ մինչեւ սնոտիապաշտութեան հասած է) , հաւատացէ՛ք , որ ի բաց առեալ բարեկիրթ եկեղեցականներ և գերդաստաններ , Ռուսիա , իրր քրիստոնեայ և շարունակ յանուն Քրիստոնէութեան ազմուկ և պատերազմ յարուցանող Տէրութիւնն , շատ տխուր տեսարան կը ներկայացնէ : Մենք խօսելով սոյն ճշմարտութիւնն՝ ո՛չ թէ կը թըշնամանենք , քա՛ւ լիցի , այլ մի սուրբ հարկ կը վճարենք այն երկրին , ուր զարգացած է մեր մանկութիւնն . և համոզուած ենք թէ՛ համամիտ են մեզ հիւսիսային Պետութեան մէջ գտնուած ամեն բարոյասէր և ժողովրդասէր Ռուսներն , Բայց Ռուսիա մի Պետութիւն է , եթէ իւր Եկեղեցին իւր քաղաքական իշխանութեան տակ առած է , միւս կողմէն իւր ազգըն կորստեան վտանգ չ՛ունի , և կարող է ժամանակ գալ , որ նոյն իսկ Ռուսիա պարտաւորի ազատ թողուլ իւր Եկեղեցին իւր շահուց համար . իսկ Հայոց Եկեղեցւոյ ազատութիւնն գրաւելով՝ Հայոց ազգութեան կորուստ կը պատրաստուի . և այս առթիւ ի՛նչ որ Ռուս Կառավարութիւնն իբր խնամակալութիւն կը համարի , մեզ համար տիրապետութիւն է , որով անձայն և անշուկ մեր Եկեղեցին կը կողոպտուի իւր դարաւոր հարստութենէն . քանզի չը կայ

հարստութիւն առաւել բարձր, առաւել թանկագին քան կրօնի ազատութիւնն, քան խղճի ազատութիւնն որ մեր մարդկային էութեան ամենալաւ, ամենափեմ և անբաժան մասն է կամ նոյն ինքն Աստուածի մեղ յայտնեալ:

Երբ Ռուս կառավարութիւն կամի օրէնք տալ մեր Եկեղեցւոյն, միթէ Ազգովին պարտական չե՞նք ասել: « Մեր Եկեղեցին օտար օրինաց, օտար Պալատե. Գիւլայի կարօտ չ'է: Քանզի ինքն իրեն համար օրէնք ունի, որով ա՛յսքան դարեր ապրած է »:

Երբ Ռուս կառավարութիւնն կը հետամտի խառնուել մեր հոգեւոր գործերուն, կամի ինքն տնօրինել, ինքն հաստատել, ինքն հանել, ինքն դնել, միթէ պարտաւոր չե՞նք բողոքել. « Մի՛ կապտեր մեր հոգեւոր ազատութիւնն. քանզի մենք իբրեւ քրիստոնէական Եկեղեցւոյ հարազատ զաւակներ՝ զիտենք արդէն թէ՛ ո՛ւր որ լինինք, հպատակ ենք երկու Տեսչութեան — մեր խղճով հպատակ ենք հոգեւորին, որուն ո՛չ մի արարած չը խառնուիր բաց յ'Աստուծոյ. իսկ մարմնով և մեր գոյքով հպատակ ենք քաղաքական օրինաց. իբրեւ քաղաքացի հնազանդ ենք Իշխանութեան. իբրեւ հաւատացեալ, իբրեւ քրիստոնեայ հնազանդ ենք միայն Աստուծոյ »:

Երբ Ռուս կառավարութիւնն կը հետամտի իւր հրամաններով և կանոններով մեր Եկեղեցին մտնել, միթէ պարտաւոր չե՞նք ասել իրեն, ի՛նչ որ ասաց Մօսկուայի Մեարօպօլիտն երբ Լատին խաչն կ'ուզէին Մօսկուա մտցնել. « Եթէ թոյլ տրուի Պապի պատուիրակին Լատին խաչով քաղաք մտնել, մենք բոլոր եկե-

ղեցականներով միւս դռնէն դուրս կ'ելնենք : (1)

Երբ Ռուս կառավարութիւնն մեր կրթական իրաւունքն մեր եկեղեցւոյ ձեռքէն կ'առնու . միթէ պարտաւոր չենք յայտարարել թէ . « Դպրոցն կարօտ է Կրօնքի . Կրօնքն կարօտ է Դպրոցի : Չկայ եկեղեցի

---

(1) Իւան Գ. (Վասիլ Վասիլովիչի որդին և յաջորդն) կամեցաւ ամուսնանալ Յունաց Պալէօլոգ կայսեր Թովմայ եղբոր դրստեր Սոփիայի հետ : Թովման Մօրէայի Վասալն էր, Բիւզանդիոնի կայսրութեան կողմէն : Երբ Օսմանցիք կ. Պօլիսն առին , Թովման ապաստանեցաւ ի Հաովմ , անդ մեռաւ , և իւր զաւակներն մնացին Պօղոս Բ. Պապի խնամոց տակ , ընդ որս էր Սոփիան : Երբ Իւան այրիացաւ , իւր գործակալաց միջոցաւ Սոփիայի ձեռքը խնդրեց : Եւ երբ իմացաւ թէ՛ Պապն ամենեւին հակառակ չէ , 1471ին դեսպանութիւն զրկեց պաշտօնապէս : Սեբաստո Գ. Պապն՝ Սոփիայի հետ ուղեկից կարգեց մի կարգինալ մինչեւ ի Մօսկուա , և ճանապարհին ամէն քաղաքի մէջ հանդիսիւ կրնգուճուէր : Առջեւէն կերթար մի Լարին Խալ : Ամէն տեղ կը զարմանային . բայց ձայն չ'էին հաներ . երբ մօտեցան Մօսկուային , և կը պատրաստուէին միւս օրն հանդիսիւ քաղաքն մտնել , Մետրօպօլիտն մարդ զրկեց Իւան մեծ Դքսին , յայտնելով որ եթէ նա թողլ տայ Պապի պատուիրակին Լարին Խալով քաղաք մտնել , ինքրն միւս դռնէն պիտի ելնէ բոլոր եկեղեցականներով : (Եկեղեց. Տորեթ. կոյտերմիտ Մարինարանին վիճանայէ) :

Ժողովուրդն եւս եկեղեցականաց կողմն էր : Իւան իսկոյն Բօյարներ զրկեց Պապի նուիրակին , և իրողութիւնն հասկցուց մրտերմաբար : Խաչն իսկոյն փաթաթուեցաւ և դրուեցաւ մի սայլի վրայ , որ կերթար իշխանուհւոյն ետեւէն , և յայնժամ միայն Մետրօպօլիտն դիմաւորելու ելաւ : Իշխանուհին առաջնորդուեցաւ Մայր Եկեղեցին , և ամուսնութիւնն կատարուեցաւ 1472ին :

Այս Իւանն էր , որ ամեն ռուսական եկեղեցական գերիշխանութիւն ջնջեց և ամփոփեց իւր քաղաքական իշխանութեան մէջ : Իւանի կողմած այս միապետութենէն է , որ կը բղխի ամենան յինչ Ռուսիոյ կառավարութեան մէջ :

առանց դպրոցի , չկայ դպրոց առանց Եկեղեցւոյ (2) ,  
և Հայոց Եկեղեցիին ու դպրոց անբաժան ընթացած  
են . Հայոց վանքերն բոլորն դպրոց եղած են . քան-  
զի այն Եկեղեցիին որ չուսուցաներ , Եկեղեցի չէ .  
քանզի ուսուցանելն Եկեղեցւոյ մի անմենամեծ և էա-  
կան իրաւունքն է ։

Այսպիսի բռնաբարման առջեւ լռելն ինքնասպա-  
նութիւնն է . պէտք է ձայն բարձրացնել Եկեղեցւոյ  
իրաւանց համար . պէտք է բողոք բառնալ : Եթէ  
Պատրիարք ու ժողովականք ոմանք մեղանչեցին մեր  
Եկեղեցւոյ ազատութեան դէմ 1885 Նոյեմբեր 1 գու-  
մարման մէջ , մեղանչեցին Պալատէնիան մերժող Կա-  
թողիկոսաց դէմ , նախնի արթուն Հայրապետաց , ա-  
րի Նահատակաց , անձնազոհ Մարտիրոսաց դէմ , ո-  
րոնք իրենց Եկեղեցւոյ և Կրօնի ազատութիւնն ամեն  
ազատութենէ բարձր դաւանեցին : Եթէ նոքա մեղան-  
չեցին և խնդիրն լռութեան տուին , միթէ Ազգն պի-  
տի վհատի՞ , պիտի կարծէ՞ թէ Եկեղեցւոյ ազա-  
տութեան ոգին , Կրօնական ազատութեան ոգին միշտ  
բարձրե՞րը կը բնակի Պատրիարքական և այլ աթոռ-  
ներուն վերայ : Ո՛չ , ո՛չ , Կրօնական ազատութեան ո-

---

Մեծն Պետրոս սոյն փոփոխումն պատրաստ գտաւ , բայց ի  
հարկէ ինքն էր , որ աւելի հաստատ դրութեան վերածեց և ժո-  
ղովուրդն նոյն դրութեան հպատակեցուց :

Մեծն Պետրոս էր որ Պատրիարքական իշխանութիւնն կամ  
արտօնութիւնն ջնջեց , և Նորա տեղ հաստատեց Եպիսկոպոսաց  
Ժողով , և անուանեց Կաթողիկոսի Կաթողիկոս : Որովհետեւ  
սոյն Ժողովն կախեալ է Կայսերաց գերիշխանութենէն , ուստի և  
Կայսերք կը համարուին Գլուխք Ռուսական Եկեղեցւոյ :

[2] Տե՛ս ԿՐԹԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ :

գին շատ անգամ կ'ապաստանի այնպիսի խոնարհ տեղեր, որ մարդոյ մտքէն անգամ չ'անցնիր: Եկեղեցւոյ ազատութեան նահատակներն միայն Եպիսկոպոսներ ու Նախարարներ չեն եղած, այլ շատ անգամ հասարակ վանականներ ու քահանաներ, շատ անգամ պարզ աղօթաւորներ ու նաեւ տկար կանայք: Պէտք է իմանանք որ եթէ հալածանք էր Յազկերտի հրաւերն ի կրակապաշտութիւն, հալածանք է նոյնպէս մեր Եկեղեցւոյ ընտրական իրաւունքն մեր ձեռքէն կորզելն: Պէտք է իմանանք որ եթէ Պատարագի բաժակին մէջ ջուր խառնելն հակառակ է մեր Եկեղեցւոյ պաշտաման, որուն համար մեր Նախնիք այնքան ընդդիմացան, նոյնպէս հակառակ է մեր Ազգային եկեղեցական ընտրութեան մէջ օտարի մատն, օտարի թեւադրութիւնն, օտարի քաղաքականութիւն խառնելն: Ո՞վ չգիտեր, որ Հայոց Եկեղեցւոյ զաւակաց ընտրութեամբն ու վկայութեամբն է, որ ընտրեալքն կը սարկաւազանան, կը քահանայանան, կ'եպիսկոպոսանան, կը կաթողիկոսանան և կ'օծուին: Ո՞վ չգիտեր, որ սոյն ընտրութեան հիմն ընտրողաց սէրն ու յարգանքն է, առանց որոյ չըկայ բարոյական իշխանութիւն: Օտարի միջամտութնն, օտարի խառնուիլն թշնամանք է մեր Եկեղեցւոյ Ձեռնադրութեան Ս. Խորհրդոյն որ սիրոյ վրայ հիմնուած է և ո՛չ բռնութեան: Օտարն ինչպէս որ իրաւունք չ'ունի միջամտել մեր Պատարագի Սուրբ Արարողութեան կամ այլ Խորհրդոյ, նոյնպէս իրաւունք չ'ունի միջամտել (որ և իցէ պատրուակաւ) մեր Եկեղեցւոյ Ձեռնադրութեան: Ո՛հ, քանի՛ տգէտ էին այն վաստաբաններն, որոնք համարա-

ւեցին թէ՛ Հայաստանեոյց Եկեղեցին ընտրական օրէնք չունի : Նոքա ուրացան կամ մոռացան անշո՛ւշո որ Հայոց Եկեղեցին ամենէն մեծ օրէնքն ունի , ամենէն ազատականն , ամենէն քրիստոնէականն — ՎԿԱՅՈՒԹԵԱՄԲ ԱՄԵՆԱՅՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ : Նոքա ուրացան կամ մոռացան , որ Եկեղեցին ինչպէս Քահանայութեան , նոյնպէս և Եպիսկոպոսութեան ու Կաթողիկոսութեան համար կը պահանջէ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ Ժողովրդեան : Ժողովուրդն է որ կ'ընտրէ , ժողովուրդն է , որ կը վկայէ , առանց օտարի միջամտութեան . քանզի իրեն համար , իւր Եկեղեցւոյն համար պաշտօնեայ կը կացուցանէ , և ո՛չ ո՛ր և է քաղաքականութեան : Ժողովրդի վկայութիւնն է ահա՛ Հայոց Եկեղեցւոյ ընտրական ամենամեծ օրէնքն : Անտարակոյս մի կատարեալ հերձուած , մի հերեփիկոսութիւն է Հայոց Եկեղեցւոյ դէմ՝ օտարի ընտրութիւնն : Հայոց Եկեղեցին անհարազատ կը ճանաչէ ա՛յն Եկեղեցականն , ա՛յն Կաթողիկոսն , որ օտարի կողմէն կուգայ : Ճշմարիտ հովիւ չէ՛ նա , « Որ ո՛չ մտանէ ընդ դուռն ի գաւիթ ոչխարաց » :

Միթէ ի Ժամանակին այսպէս չը վարուեցան Հայք Բրքիչոյի , Շմուելի և Սուրմակի դէմ , որք օտարի ձեռամբ Կաթողիկոսական Աթոռն յափշտակել նկըրտեցան :

Միթէ իսպառ կործանիչ և մոլորական չէ՞ այն կեղծ երկիւղածութիւնն իսկ , որով ոմանք կ'առարկեն իբր թէ մեր իրաւունքն պաշտպանելով և օտարի միջամտութիւն մերժելով՝ մեր Եկեղեցին կը բաժնուի , մեր Հայրապետութիւնն կը բաժնուի : Արդեօք իրաւունք զոհելով , Կրօնական ազատութիւն զոհելով ,

Եկեղեցին ու Հայրապետութիւն կանգո՞ւն կը մնան , որ կարենան անբաժան մնալ : Արդեօք օտարի միջամտութիւնն բոլորովին չսառեցնե՞ր Հայ ժողովուրդն իւր Եկեղեցիէն , իւր Հայրապետութենէն : Միթէ այս սառնութիւնն մի սոսկալի բաժանումն չէ՞ Հայ Ազգին և Եկեղեցւոյն համար : Միթէ Եկեղեցւոյ միութեան պայմանն է Կաթողիկոսական անուան լոկ յիշատակութիւնն , և այն եւս օտարընտիր Կաթողիկոսի : Միթէ Հայոց Հայրապետութիւնն չկո՞րծանիր , չ'ա՞նհետեր , երբ շիջանի ժողովրդի Քրիստոնէական և Ազգային եռանդն ու սէրն առ այդ Հայրապետութիւն : Եթէ Հայ սրտերէն բաժնուած մի Հայրապետութիւն կարող է գոյութիւն ունենալ , դա անշուշտ Հայոց Հայրապետութիւն կարող չէ լինիլ , և ո՛չ իսկ Հայոց բուն Հարապետութեան ստուերն անգամ . քանզի Հայոց Հայրապետութիւնն իւր Առաքելական դարաւոր իրաւունքներով և Ազգային յատկանիշներով միայն Հայոց Հայրապետութիւն եղած է և կարէ լինիլ :

Միթէ իսպառ հակառակ չէ՞ Քրիստոնէական ոգւոյ և Կրօնական ազատութեան՝ այն նենգ կամ տգիտական առարկութիւնն եւս , որով ոմանք Ազգը կ'ահաբեկեն , Ազգի բարոյական ոյժն կը ջլատեն՝ շարունակ կրկնելով թէ՛ Ռուսիա հզօր Տէրութիւն է , ի՞նչ կարող ենք առնել , մոռնալով կամ ուրանալով , որ ա՛յլ է բռնութիւն , ա՛յլ է իրաւունք . և ամենէն մեծ զօրութիւնն՝ իրաւունքն է : Այո՛ , շատ անգամ կը կըրկնուի բռնաւորներու պատգամն թէ՛ « Իրաւունքն հըզօրինն է » : Բայց մարդկայնն Ազգի Պատմութիւնն ցոյց

կը տայ, որ ճանաչուած իրաւունքն միշտ յաղթական իրաւունք է: Ռուսիա հզօր Տէրութիւն է, այո՛, բայց կը հետամտի մեր Եկեղեցին փոխել, մեր լեզուն փոխել, մեր արիւնն փոխել, մեր տիպն փոխել, միով բանիւ կը նկրտի զմեզ Ռուսութեան մէջ ձուլել: Իրաւունք ունի՛. — Ո՛չ. պէ՞տք է որ լուութեամբ ընդունինք այս փոփոխութիւններն. — Ո՛չ, յաւիտեան ո՛չ, քանզի մեր Եկեղեցին, մեր խիղճն, մեր լեզուն, մեր Ազգային տիպն Աստուծոյ պարգեւներն են, և մեր Նախնիք աւելի սիրած են մեռնիլ քան թէ այդ պարգեւներն փոխել կամ ուրանալ: Մենք ամենեւին քաղաքական խնդիր չունինք՞ Ռուսիոյ Կառավարութեան հետ. մեր խնդիրն բարոյական խնդիր է. խղճի և Եկեղեցւոյ ազատութեան խնդիր է: Ամեն Տէրութիւնք, ո՛ւր որ Հայ կայ, մանաւանդ Օսմանեան բարեխնամ և ժողովրդասէր Տէրութիւնն, առ որ ամեն Հայ երախտապարտ պիտի մնայ յաւիտեան, ոչ միայն յարգած են մեր Կրօնական, Կրթական իրաւունքներն, այլ և հրովարտակներով հաստատած: Ի՞նչ է ուրեմն շարժառիթն որ Ռուսիոյ Կառավարութիւնն կամի բացառութիւն կազմել և տիրել այն Եկեղեցւոյ զաւակներուն խղճին և Կրօնական ազատութեան վրայ, որոնք քաղաքականապէս հլու և հաւատարիմ հպատակներ են: Միթէ պարտաւոր չե՞նք բողոքել թէ՛ Կրօնական ազատութիւնն մեր Եկեղեցւոյ օրէնքն է, մեր Եկեղեցւոյ հաւատքն է: Մեր Եկեղեցին ինքն եղած է և ինքն պէտք է լինի իւր տէրն, իւր իրաւանց հսկողն, իւր զաւակաց հոգւոր և բարոյական պիտոյից մատակարարն. քանզի ինքն իւր սոյն կեան-

քով միայն ապրած է , քաղաքական կեանքի հետ խառնուելէ միշտ զգուշանալով : Հաւատացեալն ինքն պէտք է հոգայ իւր կրօնքն , որ կրօնք ունենայ : Հայք այսպէս հաւատացած են և այսպէս գործած են : Ծճմարիտ Հայն հալածանքէ վախցած չէ . քանզի պարտաւորութիւն և զոհողութիւն իրարմէ անբաժան դաւանած է : Հայք այսօր եւս այս դաւանութիւնն , այս եկեղեցւոյ ազատութեան իրաւունքն պիտի հռչակեն , որպէս զի յարգ ու պատիւ մատուցած լինին իրենց Քրիստոնէական կրօնին : Հայք պարտաւոր են ցոյց տալ աշխարհի , որ մեռած չէ իրենց սրտի մէջ կրօնի ազատութեան սէրն , կրօնական եռանդն , իրենց եկեղեցւոյ իրաւանց համար ունեցած նախանձախընդրութիւնն , իրենց նախնեաց աւանդներու պահպանութեան հսկողութիւնն . . . Ամեն Հայ պէտք է դաւանի որ իւր բազմաչարչար եկեղեցին է , որ Ազգին մէջ միշտ արծարծած է մարմնաւոր և նոյն իսկ մտաւոր կեանքէն աւելի բարձր մի հոգեւոր կեանք , մի քրիստոնէական կեանք : Ամեն Հայ պարտաւոր է սթափիլ , պարտաւոր է դժբեւ , պարտաւոր է դիմել , ուր հարկն է և պարտաւոր է աղօթել որ իւր եկեղեցին կանգուն մնայ , իւր հոգեւոր կեանքն չը շիջանի , իւր եկեղեցւոյն կորուստ սպառնացող վտանգներն անհետին :

Ո՛վ դո՛ւք , սաղմոսերգու վանականներ , երբ ազադակէք ձեր անապատներուն մէջ . « Աստուած , Դու յարուցեալ գթասցիս ի վերայ Սիօնի , ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ » յիշեցէ՛ք , որ Հայոց եկեղեցին վտանգի մէջ է , և ազատութիւն հայցեցէ՛ք :

Ո՛վ երգասաց դպիրներ և հեղաբարբառ մանուկ-սեր , երբ երգէք . « Թագաւո՛ր երկնաւոր , զԵկեղեցի քո անշարժ պահեա՛ » , յիշեցէ՛ք , որ Հայոց Եկեղեցւոյ ազատութեան հիմունքն կը փորուին և աղբրեցէ՛ք որ անշարժ մնայ մեր Ազգի հաստատութեան սիւնն , մեր Սուրբ Եկեղեցին :

Ո՛վ սրբագործ Պատարագիչներ , երբ մրմնջէք առ Հայրն երկնաւոր . « Օրհնեա՛ զՍուրբ Կաթուղիկէ և զԱռաքելական Եկեղեցի քո , զոր փրկեցեր պատուական արեամբ Միածնի քոյ և ազատեցեր խաչիւն սրբով » , արտասուօք հայցեցէ՛ք շնորհել նմա զանշարժութիւն ի թշնամեաց պատերազմէ :

Եւ դո՛ւ , ժողովուրդ Հայոց , երբ կը լսես Շարականաց սքանչելի նուագներն ու հայցուածներն Եկեղեցւոյ հաստատութեան համար , դո՛ւ ևս ձայնակցէ՛ , դո՛ւ ևս աղաղակէ՛ . « Հաշտարար ընծայ Հօր ազգի մարդկան , Քրիստոս Աստուած , զԵկեղեցի քո հաստատեա՛ խնդրուածովք նահատակաց ի քէն ընտրելոց , բարերար Փրկիչ , միայն մարդասէր » :

Իսկ ես ի կնիք բանիցս՝ կ'աղաղակեմ առ Քեզ ի խորոց սրտիս , ո՛վ Աստուած . Դո՛ւ կը ճանաչես զիս և զիտես , որ նենգութիւն չկայ իմ լեզուի մէջ : Դու զիտես , որ ո՛չ թէ այսօր է , որ ես կը խօսիմ , այլ իմ պատանեկութենէս ի վեր . ո՛չ թէ անձնական օգտի կամ ակնկալութեան համար է , որ կը խօսիմ . ո՛չ թէ ո՛ր և է Տէրութեան կամ ազգի դէմ թշնամութիւն կամ ատելութիւն ունիմ և կը խօսիմ , ո՛չ ո՛չ , Տէ՛ր իմ և Աստուած , այլ ժիայն կը խօսիմ ա՛յն Եկեղեցւոյ ազատութեան համար , որ գնուած է Քո

Միածին Որդւոյ արիւնովն : Քո Աւետարանդ փայ-  
լեցաւ աշխարհի վերայ իբրեւ լոյս գեղեցիկ առաւօ-  
տու : Ազգք և ազինք ցնծութիւն զգեցան : Քո Աւե-  
տարանի փրկարար լոյսն առաջին օրէն ծագեցաւ Հա-  
յոց ազգին վրայ , որ ժառանգորդ եղեւ փրկութեան  
Աւետարանիդ , անվտանգ առաջնորդուեցաւ Քո լու-  
սովդ՝ խաւար դարերու մէջ և անկորուստ պահպա-  
նեց Քո շնորհաց պարգեւներն — իւր Կրօնական ա-  
զատութիւնն , իւր Առաքելական իրաւունքներն , իւր  
բարձր կոչումն , իւր հոգեւոր զօրութիւնն : Աստուած  
իմ՝ այց արա՛ Քո ժառանգութեանդ , այց արա՛ այն  
Այգւոյն , զոր տնկած է Քո Աջն , և որ ոռոգուած  
է բիւրաւոր մարտիրոսաց արիւնով : Ազատէ՛ Քո ժա-  
ռանգութիւնդ գերութեան վտանգէն . զի Քո ձեռ-  
քն են թագաւորաց սրտերն և կարող ես փոխել ինչ-  
պէս կամիս , որ ազատ թողուն Քո զաւակաց խիղճն ,  
պաշտամունքն , Քո Եկեղեցւոյ Տեսչութիւնն , որուն  
վրայ Դու միայն ունիս իշխանութիւն և որ միայն  
Քո օրէնքով պիտի կառավարուի : Աստուած իմ՝ ա-  
զատէ՛ Հայոց Եկեղեցին , ազատէ՛ Հայոց Հայրապե-  
տութիւնն :



## Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ծ

Հայոց Ազգի համոզումն ու դաւանութիւնն իւր Եկեղեցական պաշտօնէից ընտրութեան նկատմամբ միշտ անփոփոխ է Քրիստոնէութեան առաջին դարերէն մինչեւ մեր օրերն :

Հայոց Ազգն միշտ մի ընդհանուր Կաթողիկոս ընտրած է , և միշտ ինքն ընտրած է : Թողունք անցելոյն պատմութիւնն պատմագիտաց , և բաւական համարինք միայն կարգաւ յառաջ բերել այս տեղ այն պաշտօնական գրուածաց օրինակներն կամ նշանաւոր հատուածներն , որոնք կը վերաբերին 1885 թուականի 21 Ապրիլի Կաթողիկոսական ընտրութեան :

Ա. Ազգային Ժողովն իւր կողմէն պատուիրակ կարգելով Կաթողիկոսական տեղապահ Տ. Մկրտիչ Ս. Արքեպիսկոպոսն՝ այսպէս կը գրէ իւր գրութեան մէջ . « Ըստ այսմ ահա փութամք առաջի առնել Համագային Ընտրողական պատկառելի Ժողովոյ Մայր Աթոռոյդ զցանկ երից ընտրելեաց Հայոց Տաճկաստանի , որք են .

Ա. — Ամենապատիւ Տ. Մկրտիչ Ս. Արքեպիսկոպոս Խրիմեան , նախկին Պատրիարք Կ. Պօլսոյ . Բ. — Գեր. Տ. Մելքիսեդեկ Ս. Արքեպիսկոպոս Մուրատեան , Առաջնորդ Զմիւռնիոյ վիճակին . Գ. — Գեր. Տ. Խորէն Ս. Եպիսկոպոս Աշղգեան , Հայր Վանուցն Արմաշու :

Արդ՝ փութամբ թղթովս այսուիկ յանձն առնել  
Բարձր Սրբազնութեան Ձերում զպաշտօն պատուի-  
րակութեան Հայոց Թուրքիոյ, խնդրելով զի հաճես-  
ջիք ընթեռնուլ զայս պաշտօնական թուղթ մեր յա-  
տենի Համազգական Ընտրողական պատկառելի ժողո-  
վոյն, ներկայացուցանել նմա զայստսիկ զերիս Ընտրե-  
լիս յանուն համօրէն վիճակացն Հայոց, որ ընդ հո-  
վանեաւ Օսմանեան Պետութեան, և, ըստ եղանակի  
նշանակելոյ ի տեղեկագրին անցելոյ ամի, բարդել ի  
քուեայսն մեր զգումար քուէից պատկառելի ժողո-  
վոյդ, որպէս զի ԵՊԻՍԿՈՊՈՍՅ՝ որ ստասցի զառաւե-  
լագոյն թիւ ձայնիցն՝ ՀՌԶԱԿԵՍՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ամե-  
նայն Հայոց ըստ նախնաւանդ ծիսից և օրինաց Հա-  
յաստանեայցս Ս. Եկեղեցւոյ : »

Բ. — Ս. Էջմիածնի Համազգային ժողովոյ աշխար-  
հական պատգամաւորներն կ'երդնուն մի ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ընտրել, և ո՛չ երբէք Կաթողիկոսացուներ : Ահա՛ ի-  
րենց երդման օրինակն .

### Ե Ր Գ Մ Ն Ա Գ Ի Բ

Մեր ի ներքոյ անուանեալքս խոստանամք և երդնումք յա-  
նուն Ամենակարողին Աստուծոյ, առաջի Սրբոյ Աւետարանի նո-  
րա, առ այն թէ ցանկամք և պարտիմք յայսմ առաջիկայ ընտ-  
րութեան Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսի ամենայն Հայոց  
վասն գլխաւոր կառավարութեան Սրբոյ Լուսաւորչեան Եկեղեց-  
ւոյ Հայոց և Ծայրագոյն տեսչութեան Եկեղեցականաց նորին,  
ըստ մաքուր խղճի մտաց և պարտուց մերոց առանց իրիք աշա-  
ռութեան և սեպհական ակնկալութեանց ի բաց հերքելով ի մէնջ  
զամենայն մախանս թշնամութեան և կամ զորպիսի և իցէ շաղ-  
կապ մերձաւորութեան և բարեկամութեան, ընտրել ի միջոյ հո-

գեւորականաց հայրենի Եկեղեցւոյ մերոյ՝ ԶԱՅՆՊԻՍԻ ԱՆՁՆ, զոր ըստ յատկութեանց հանճարոյ և խղճի մտացն առաւել ընդունակագոյն համարիմք մեր, և յո՛րմէ ակն ունիմք, զի ի կատարումն պարտաւորութեանց իւրոց, զորս դնէ ի վերայ նորա սոյս վե՛հ աստիճան հոգեւոր, հանգիսացուցէ նա զինքն ջերմեռանդ պաշտօնեայ Աստուծոյ և հոգունակ անօրէն բարօրութեան և օգտի Եկեղեցւոյն Քրիստոսի և հաւատացեալ Հայրապետական իշխանութեան նորա ի վերայ բանաւոր հօտին Քրիստոսի: Իսկ եթէ սյլազգ վարեցուք, յորժամ իբրև անհոգ չ'օգտէ Եկեղեցւոյ և ճշմարիտ որդւոց նորին, յորում կայանայ և սեպհական օգուտն մեր, ենթադրեմք զանձինս մեր մեղադրանաց եղբայրակցաց մերոց և ի հանդերձելումն պատասխանատուութեան առաջի Աստուծոյ և ասեղ զատաստանի նորա: Ի վախճան երգմանցս վասն անաչառ ընտրութեան՝ համբուրեմք զՅան և զԿազ Փրկչին մերոյ, Ամէն:

Երգմանցուցի

Երեմիա Եպիսկոպոս

Ըստ սյամբերգման երգուաք

Արգար Յովհաննիսեանց	Յովհաննէս Սարգսեանց
Համբարձում Առաքելեանց	Աղեքսանդր Լալայեանց
Ներսէս Աթաբէկեանց	Սիմէօն Աթանասեանց
Աղեքսանդր Ղազազեան	Իսահակ Ալաճալեանց

Գ. — Համազգային Ժողովոյ Նախագահ Տ. Մըկըրտիչ Ս. Արքեպիսկոպոսն կը բանայ Ընտրողական Ժողովն հեռեւեալ նշանաւոր ատենախօսութեամբ, որով կը յորդորէ ընտրել ի գահակալութիւն և ի յաջորդութիւն Ս. Հօրն մերոյ Լուսաւորչի արժանաւորագոյն հոգեւորական անձն:

Արբազան Եղբարք և Գերամեծար Պատգամաւորք Ազգիս .

Այս խորհրդաւոր և նշանաւոր պահուս ժողովելով Արբոյ Մայր Տաճարիս մէջ , իւրաքանչիւր որ մեզանից կը զգայ անշո՛ւշտ յանձն իւր ներկայ պատկառելի ակմբիս մեծախորհուրդ նպատակըն , կը զգայ անշո՛ւշտ ամեն որ մեզանից թէ՛ ի՞նչ ծանրակշիռ պարտականութիւն ստանձնած է , զոր լիայոյս հաւատով վստահութիւն դրած է մեր վերայ զմեզ ընտրող միլիոնաւոր Հայ ժողովուրդն՝ իւր եկեղեցականներով հանդերձ : Մեր ամենասիրելի ազգայնոց այդ կատարեալ հաւատն և վստահութիւնն ի բարին և յօգուտ Ազգին և Եկեղեցւոյ ի գործ դնելու և մինչև վերջն իւրեանց յանձն առեալ նուիրական պարտաւորութեանց հաւատարիմ մնալու համար , Գերամեծար Պատգամաւորք Ազգիս , համաձայն դարաւոր սովորութեան՝ ի մէջ Տաճարիս և առաջի Արբոյ Սեղանոյս՝ յանուն ասհաւորին Աստուծոյ , հրապարակական ուխտիւք և երդմամբ վաւերացուցին զայն , որպէս զի Աստուծով ձեռնարկելի իւրեանց սոյն վսեմ Գործն կատարեն ըստ ամենայնի խզճի մտօք : Միանգամայն ի բաց մերժելով և մերկանալով զհոգի դատապարտելի կուսակցութեան , զհոգին գահայլէժ խտրութեան . բնա՛ւ երբէք չը նախապաշարիւր և իցէ ներքին և արտաքին պատճառներէ , այլ զգենուլ զհոգի հաւատարմութեան , արդարասիրութեան և անաչառութեան , քաջ ի միտ առնլով թէ՛ ո՛չ յանխորհուրդս ժողովուած եմք մեք այս միակ պարծանաց սրբաւսյր Տաճարիս մէջ , այլ թէ ժողոված եմք , յանուն Հայութեան . ուրեմն և յանուն Հայութեան և Հայաստանեայցս Սուրբ Եկեղեցւոյ ընտրելու եմք Պետ և Գլուխ : Ուստի ընդ ամենայն ծագս աշխարհի ուր ուրեք եթէ կայ և կը գտնուի Հայ անունով և կրօնիւք գէթ մի ճետ և անհատ , նա անդամ է ազգային մարմնոյ և հարազատ որդի մերս Եկեղեցւոյ : Խըտրութիւն պէտք չէ մեզ գիտել . զի ամենեքեան որդիք եմք միոյ Առաքելական Եկեղեցւոյ և անդամք միոյ Ազգի . իսկ եթէ խըտրութիւն դնելու համար անհրաժեշտ հարկ կը նկատուի՝ բայց միայն բնականաբար և բարոյապէս այդ անբռնաբարելի ճշմարտութիւնն ճանաչելու եմք և որոնելու այն արդարամիտ իրականութեան և գործողութեան շրջանակին մէջ , զոր աստուածաբան

են դրաւորապէս մեր առջեւ մեծամասնութիւն Հայոց Տաճկաստանի , որից այժմ՝ շեղիլն՝ որպէս թուի ինձ , չէ վայելուչ ըստ ուղիղ տրամադրութեան ազգային դարաւոր անժխտելի պայմանաց : Եւ որպէս զի ապացուցանեմք մեր Ազգին , ապացուցանեմք ընդհանուր լուսաւորեալ աշխարհիս , թէ Հայք ևս իւրեանց Ազգային գործերն լրջմտութեամբ և նրբաքննին հեռատեսութեամբ գիտեն անօրինակ և գիտակցաբար գործել՝ մանաւանդ թէ տխուր անցեալէն մի խրատական ազդու դաս ևս առնելով , փութամբ համերաշխ սիրով միաբանութեամբ ընտրելի գահակալութիւն և ի յաջորդութիւն մեծի Պարթևազնին Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչի և յընդհանրական կաթողիկոսութիւն ամենայն Հայոց այժմեան գտնուածներէն այն «բժանաբար» հոգեբան «նշ» որն պատկառանք կը տածէ ամենեցուն , և որոյ գործոց և կենաց բարի անցեալն և ներկայն՝ նա մանաւանդ վարդապետական կատարեալ հմտութիւնք և եռանդազին գործունէութիւնքն արդէն անկապտելի յատկութիւնք են դարձել նորա համար : Փութամբ ընտրելի ի հովուապետութիւն Հայաստանեայց Ազգի և Եկեղեցւոյ «նշ» որ իբրեւ հովիւ իւր անքուն հսկողութեամբն դէտ կեցած է միշտ իւր հաւատացեալ հօտին : Այս՝ ցանկալի է տեսնել այդպիսի բարեմասնութեամբ օժտեալ մի անձն՝ անցած ի գլուխ ղեկավարութեան Ազգի եւ Եկեղեցւոյ : Փութամբ ի վերջոյ միանալի մի սիրա և հոգի համերաշխութեան և իբրեւ որդիք հարազատ երկանց մօրս մեր Սուրբ Եկեղեցւոյ ի բաց պարուրել նորա լուսափայլ կրեակն այն սգազգեաց տխրութեան կրկնակի սեւութոյր քօզն , որով ահաւասիկ երեք ամբ են պատած է , նա կայ և մնայ ի սուգ թախճութեան : Զի յետ մահուան երջանկայիշատակ Գեորգ Գ. մեծագործ Հայրապետի՝ երբ անցեալ տարի սոյնպիսի պատուամեծար պատգամաւորաց ժողովով ընտրեց Ազգն և Եկեղեցին ի Հայրապետութիւն ամենայն Հայոց Սրբազան Պատրիարքն Կ. Պօլսոյ Տէր Ներսէս վեցերորդ , որոյ մէջ արգարեւ տեսնուած էին Աստուածածիր եւ զրուատելի բարեմասնութիւնք , բայց աւանդ , զի անակնկալ օրհասական մահն զրկեց զմեզ ազգովին վայելելուց նորա Հայրապետական շնորհն :

Ի կնիք բանիս աղաչեցուք ի բոլոր սրտէ զամենակարողն

Աստուած , դարձեալ յարուսցէ մեր բարձրաստիճան Եղբայրներից նոր մարգարէ , առաջնորդ և հովիւ բարի՝ առաջնորդել , հովուել և խնամել զլլգգ և զԵկեղեցի ճշմարտութեամբ և արդարութեամբ : Ազաչեսցուք զՍուրբ Հոգին Աստուած , ազդել և ներշնչել ի մեզ հոգի զգաստութեան և զգօնութեան , և ընդ մարգարէին ձայնակցելով ասասցուք . Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ Տէ՛ր , և զգործս ձեռաց մերոց յաջողեա՛ մեզ : Լուիցէ Տէր ազաչանաց մերոց , Ամէն :

Տեղակալ Ատենապետի Սինօղի Սրբոյ Էջմիածնի

**ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ**

Ի Ս . Էջմիածին  
 Ի 20 Ապրիլի 1885 Ապրիլի

Դ . — Ս . Էջմիածնի պաշտօնական Օրագիրն Արաքատ այսպէս կը պատկերացնէ Համազգային Ժողովոյ ընտրութեան արդեանց նկարագիրն :

«Բացուեցին Տաճարի դռները . Եկեղեցու շուրջը խոնուած բազմութիւնը շրջապատեց Եկեղեցու գաւիթը եւ հնշող անձկութեամբ սպասում էր լսել ընտրեալի անունը . Թերթիկների վերայ գրուած քուէարկեւեաց ցանկը ստացած քուէներով ժողովրդից ոմանք ստացան պատգամաւորներից եւ հնշուեց միաձայն ընտրուած Մելքիսեդեկի անունը . ամբողջ ժողովուրդը իբրեւ մի մարդ միաձայն սկսեց կեցցէ աղաղակել , եւ գլխարկները վեր բարձրացրած աւետում էին միմեանց ցանկալի անձի ընտրութիւնը . կեցցէների հոսանքի միջից պատգամաւորները գնացին դէպ ի վեհարան , իսկ ժողովուրդը անսահման ուրախութեամբ հրճվում էր :

Ամբողջ գիշերը վաղարշապատում ժողովրդական ինչոյք էր, տեղական նուագածուծեամբ, եւ ամենայն տեղ հոծ էր **ՄԵԼՔԻՍԵՂԵԿ** անուամբ : Ո՞վ է **ՄԵԼՔԻՍԵՂԵԿ**, որի անունը անա երկու ամբողջ տարի խօսվում է որպէս արժանի ոք կամեողիկոսութեան : **ՄԵԼՔԻՍԵՂԵԿ** իւր ստացած կրթութեամբ, իւր վարած պաշտօններով եւ իւր գրական վաստակներով էր արժանաւորներից արժանաւորագոյնը :

Նորին Սրբազնութիւնն իւր կրթութեամբ եւ ծագմամբ մեզ հայրենակից է եւ լաւ ճանաչում է մեր երկիրն ու ժողովուրդը : Նա երկար ժամանակ Տաճկաստանում լինելով եւ վարելով զանազան պաշտօններ ճանաչում է Տաճկահայոց : Նա Երուսաղէմի Ա. Յակովբեանց վանքում ընդունելով կուսակրօնութեան կոչումն եւ բաւական ժամանակ այն տեղ կենալով՝ ճանաչում է եւ գիտէ վանական կարգ ու կանոնները . անա՛ բարեմասնութիւններ, որ ամեն մարդու ձիրք եւ բաժին չեն» :

**Ե.** — *Համազգային Ընտրողական Ժողովոյ Պատգամաւորք հետեւեալ շնորհակալեաց գիրն կը մատուցանեն Ս. Նախագահին :*

**Գերզգօն Տէր.**

*Ընտրութեամբ արժանաւոր Ժ.Ա.Ռ.Ա.Ն.Գ.Ի Աթոռոյ Հայրապետութեան Ազգիս՝ զպաշտօն պատգամաւորութեան մերոյ յաւարտ հանեալ՝ դամբ ընդ ողջոյն հրաժեշտի մերոյ և ընդ հայցուածս հայրական Երհնութեան Ձերոյ հաւաստել Ամենապատիւ Սրբազան Տեառնդ զշնորհակալութիւնս մեր սրտագին վասն խո-*

հական ղեկավարութեան , որով առաջնորդեցիք Համազգային ժողովոյն ի բարեյաջող կլս , բառ կրկնակի յուսոյ և բազմանոց , որոց նուիրական է աւանդ հայրենատուր ի պաշտպանութիւն միութեան ընդ եզրարս մեր բնակեալս ի Տաճկաստան և յապահոյութիւն խաղաղութեան , որո՞ւ ուղարկուիք Բեկու՞ն Իրիւթու՞տ . մանաւանդ թէ ի պաշտպանութիւն իրաւասութեան Հայրապետի ամենայն Հայոց յայնդէն Խնդիր՝ որք գարուց ի դարս նուիրագործեալ կանոնական իրաւամբ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ , սեպհական են միայն իւրում Մայրագոյն Բարձր իշխանութեան և գրաւական բարոյական յառաջադիմութեան ապագայ սերնդոց Ազգիս՝ հաւատարիմ հպատակութեամբն և սիրովն առ Մայրն իւր գորովալի առ Եկեղեցին Հայաստանեայց , տան մեզ գեղեցիկ ապացոյց վստահութեան թէ՛ արդարեւ բուռն են ի Ձեզ իղձք բազմադիմի բարեմասնութեան , զոր ապացուցիք գործովք իբրեւ հաւատարիմ և հարազատ պաշտօնեայ Հայաստանեայցս սուրբ եկեղեցւոյ :

Յուսալ յուսամք համարձակօրէն , Գերզգօ՛ն Տէր , զի բարեձիր խոհականութեամբ և հաստատամտութեամբ Ձերով այսուհետեւ ևս զգէկ վարչութեան գործոց մեծի Սրբոյ Աթոռոյս մերոյ պահպանեալ անսասան , հասանելոց էք ԸՆՏՐԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏԻ մերոյ , առաւել ևս երախտագիտութեան պարտաւորս առնելով որպէս զմեզ նոյն և զժողովուրդն համօրէն , որոց ամենեցուն փափագ մեծ է տեսանել զԱթոռն Սուրբ վայելչապէս պայծառացեալ ի ձնծութիւն սրտից հարազատ զաւակաց իւրոց :

Ի Ս. Էջմիածին

Ի 22 Ապրիլի 1885 ամի

ԱՆՈՒԱՆՔ ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱՅ

Ձ. — Կաթողիկոսական ընտրութենէն զկնի սյսպէս կը հեռագրեն Նախագահն Ազգային ժողովոյ եւ Պատգամաւորք .

Ի Ձմիւռնիս , Ամենապատիւ բարձր Սրբազան Մելքիսիդէկ Արքեպիսկոպոս .

Համազգային Գերագոյն ժողովն միաձայնութեամբ ընտրելով

այսօր զԶեզ ի Գահ Հայրապետութեան , փութայ շնորհաւորել ըզ  
ցանկալի բնորութիւնն Ձեր , փափագելով տեսանել զԶեզ ի գիրկ  
Մօրս մեր լուսոյ կաթուղիկէ Էջմիածնի :

Նախագահ Ժողովոյն և Տեղապահ

ՄԿՐՏԻՁ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ի կ. Պօլիս, Պատրիարքարան Հայոց

Համազգային Ժողովն Էջմիածնի միաձայնութեամբ բնորեաց  
ի Գահ Հայրապետութեան զՏէր Տ. Մեղրիսեդեկ Արքեպիսկոպոսն  
Զմիւռնիոյ . փութամ ծանուցանել Ազգային Ժողովոյդ զյաջող  
բնորութենէս :

Նախագահ Ժողովոյն և Տեղապահ

ՄԿՐՏԻՁ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ս. Էջմիածին, 4 Մայիս (Ն. Տ) 1885

Բարձր Արքազնութեան Տեսան Մեղրիսեդեկի Արքեպիսկո-  
պոսի, ի Զմիւռնիա .

Աշխարհական պատգամաւորքն Ռուսիոյ, Պարսկաստանի եւ  
Հնդկաստանի ներկայք միաձայն բնորութեան Ձեր Արքազնու-  
թեանն ի Գահ Հայրապետական Աթոռին ամենայն Հայոց , սրտի  
բերկրութեամբ , խոնարհ որդիական ջերմեռանդութեամբ մատչե-  
լով ի համբոյր սուրբ Աջին Ձերոյ՝ շնորհաւորեն Ձեր ցանկալի բնո-  
րութիւն , տածելով յոյս փութապէս տեսնել զԶեզ բազմած Ս.  
Լուսաւորչի Աթոռին վերայ :

Իսահակ Մանուկեան Ալանալեանց՝ Նոր Նախի-  
ջեւանի եւ Բեսարաբիոյ :

Ներսէս Ասլանեան Աթաբէգեանց՝ Ղարաբաղու :

Աղեքսանդր Ղազազեան՝ Կարուց :

Սիմէօն Աթանասեան՝ Երեւանայ :

Արգար Յովհաննիսեան՝ Տիխեաց .  
 Համբարձում Առաքելեան՝ Ատրպատականի .  
 Յովհաննէս Սարգսեան՝ Աստրախանի .  
 Աղեքսանդր Լալայեանց՝ Շամախույ :

Ի գիտութիւն արժան կը դատիմք զնեւ ընտրութեան մասնակցող եկեղեցականաց անուններն , յորոց շատերէն յատուկ հեռագիր ևս ընդունուած է ի շքնորհաւորութիւն կաթողիկոսութեան :

Անդամք Սինօդի

<i>Տեղակոյ Ատենապետի Սինօդի</i>	Մկրտիչ Արքեպիսկոպոս	Մեսրոպ եպիսկոպոս	Սմբատեան
	Յովակիմ	»	Տ. Գրիգորեան
	Երեմիա	»	Գալստեան
	Ներսէս	»	Խուդավերդեան
	Մամբրէ վրդպետ	Սանասարեան	

Պատգամաւորք Միաբանութեան Մայր Աթոռոյ

Սերովբէ եպիսկոպոս	Արարատեան
Գրիգոր	» Աղափիրեան
Յովհաննէս	» Տէր Յարութիւնեան
Գրիգոր Ծ. վարդապետ	Տ. Ստեփաննոսեան
Արիստակէս	» Գաւթեան
Յովակիմ	» Դամէքեան

Վիճակաւորք Ռուսաստանեայց

Գրիգոր Արքեպիսկոպոս Սագինեան՝ Կառավարիչ  
 Դարաբաղի

Ի կողմանէ վիճակաւորին Ատրպատականի՝ Մը-  
կըրտիչ Արքեպիսկոպոս

Ի կողմանէ վիճակաւորին Պարսկաստանի եւ Հընդ-  
կաստանի՝ Սերովբէ Եպիսկոպոս Արարատեան

Թաղէոս Եպիսկոպոս Զիւնական, կառավարիչ  
Շամախւոյ

Սուքիաս Եպիսկոպոս Պարզեան՝ կառավարիչ Աստ-  
րախանի

Գրիգոր Եպիսկոպոս Աղուանեանց՝ կառավարիչ  
Կարուց

Արիստակէս Եպիսկոպոս Սեդրաքեան՝ վիճակա-  
ւոր Տփիսեաց

Գէորգ Եպիսկոպոս Սուրէնեան՝ Փոխ. Թեմակալ  
Երեւանայ

Ի կողմանէ վիճակաւորին Բեսարաբիոյ եւ նոր Նա-  
խիջեւանայ՝ Կարապետ Վարդապետ Տ. Գալստեան :

Կը թողումք մի առ մի յառաջ բերել այն բազ-  
մաթիւ հեռագրերն , որք ուղղուած են աշխարհիս  
ամեն կողմերէն , ո՛ւր որ Հայ կը գտնուի , և որք կը  
կրեն ստորագրութիւններ Սինօդականաց , Առաջնոր-  
դաց , Ժողովոց , Քաղաքապետաց , արական և իգա-  
կան սեռի Ընկերութեանց , Տեսչութեանց , Քահանա-  
յական և Ուսուցչական դասուց , և առհասարակ Հա-  
յաստանեայց Ս . Եկեղեցւոյ ամեն կարգի և աստի-  
ճանի զաւակաց : Սոյն հեռագրերն մեր Ազգի հա-  
մոզման և խղճի ինքնաբուզիս ՎԱՍՅԱԹԻՒՆ է , արտաքոյ  
որոյ ամեն ինչ պատրանք է կամ բռնութիւն :

Ը . — Կ . Պօլսոյ Ս . Պատրիարքն կ'ողջունէ Ազգ .

Երեսփոխանութիւնն ի միջի այլոց հետևեալ խօսքերով .

Կարձեալ ուրախութեամբ կը ծանուցանեմ թէ՛ Ամենայն Հայոց կաթողիկոսական ընտրութիւնը կատարուեցաւ ի 21 Ապրիլի ի Ս. Էջմիածին , և միաձայն քուէով Համազգային Ընտրողական Ժողովոյն՝ ընտրուեցաւ Զմիւռնիոյ Առաջնորդն Տ. Մեկքիսեդեկ Աբբեպիսկոպոս : Եւ Վարչութեան որոշմամբ թէ՛ առ Նորին Աբբազնութիւնն և թէ՛ առ Նախագահն Ընտրողական Ժողովոյն շնորհաւորական հեռագրեր ուղղեցինք :

Իսկ Երեսփոխանութիւնն իւր Ուղերձին մէջ սոյն խօսքերն կ'ուզէ առ Ս. Պատրիարքն .

Նմանապէս խորին գոհունակութեամբ իմացաւ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութիւնն : Քաջայոյս է Երեսփոխանութիւնս՝ թէ Ազգին միաձայն Ընտրեալն՝ Ամեն. Տ. Մեկքիսեդեկ Ս. Աբբեպիսկոպոս պիտի բազմի ընդ հուպ ի Մայր-Աթոռն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ :

Թ. Երբ լուր կը հասնի , որ Մակար Սրբազանն կաթողիկոս անուանուած է Ռուսիոյ Ինքնակալէն , իսկոյն Ազգային Ժողով կը գումարուի և խնդիրն Յանձնաժողովոյ քննութեան կ'ենթարկուի :

Յանձնաժողովն երկու Տեղեկագիր կը պատրաստէ , որոց պարունակութեան մէջ մասամբ համանմանութիւն կայ , բայց ո՛չ եզրակացութեան : Յանձնաժողովոյ 13 անդամներէն 8 ն կըստորագրեն մի Տեղեկագիրն , որ կը կոչուի Մեծամասնութեան Տեղեկագիր , 3 ն կըստորագրեն միւսն , որ կը կոչուի Փոքրամասնութեան Տեղեկագիր , երկու անդամք եւս ձեռնպահ

կը մնան և չ'են ստորագրեր ո՛չ մի Տեղեկագիրն :

Մեծամաստութեան Տեղեկագիրն նախ կը հաստատէ թէ . « Կարելի չ'է Տ . Մակար Արքեպիսկոպոսի ընտրութիւնն՝ արդի վիճակին մէջ՝ համազգական համարել , ու Նորին Սրբազնութեան կաթողիկոսացումն Եկեղեցւոյ օրինաց կատարելապէս համաձայն և Մայր Աթոռոյ Գահակալին ընդհանրական հանգամանացն համապատասխան նկատել . վասն զի կրօնականք և աշխարհականք՝ ի միասին կը կազմեն Հայոց Ազգն ու Եկեղեցին , վասն զի առաքելական Յաջորդն Սրբոցն Թագէի և Բարթողիմեայ ընդհանրական Գլուխն է Հայ Եկեղեցւոյն՝ որ ի Թուրքիա , Ռուսիա , Պարսկաստան , Հնդկաստան և ի սփիւռս աշխարհի , մինչ Տ . Մակար Արքեպիսկոպոսի ընտրութեան մէջ և ո՛չ մէկ երկրի աշխարհականաց ձայնն ու մասնակցութիւնն կայ » : Բայց ապա կը զիջանի « Համակերպիլ բացառաբար Մակար Արքեպիսկոպոսի կաթողիկոսացման , ապագային օրինակ չը համարուելու պայմանաւ : »

Տեղեկագիրն կ'առաջարկէ նաև Մակար Սրբազանի ուշագրութեան յանձնել 1883ին Ազգային Ժողովէն ծրագրեալ Տեղեկագիրն , և ի հակառակ դէպս վերապահել Ժողովոյ ազատութիւնն , եթէ չ'փրկուին Թուրքիոյ Հայերն ապագային մէջ յուսախար գործելու դժբաղդ հարկէն : Բայց ի հարկէ ո՛չ այլ ինչ է այս , եթէ ո՛չ յուսախարութեան յուսախարութիւն :

Երկու Տեղեկագրերն ևս Ազգային Ժողովոյ կը մատուցուին 1885 թուականի Նոյեմ . Աի նստին մէջ : Երեսփոխանաց թիւն 70էն աւելի կը լինի : 42 Երես-

փոխանք կը համակերպին Մեծամասնութեան Տեղեկագրին, 16ն կ'ընդունին Փոքրամասնութեան Տեղեկագիրն, իսկ մնացեալքն թէև համաձայն վերջնոյն՝ կը հեռանան ժողովէն առանց քուէարկութեան մասնակցելու :

Զարմանալի է, որ Ազգ. ժողովոյ նստին օրուան ամսաթիւն կը կրէ Մակար Արքազանի օժման էջմիածնական Մանուցագիրն, որ հրատարակուած է Արեւելքի նոյ. 2 թուոյն մէջ : Երեւի թէ նոյն իսկ ժողովոյ բացառական որոշումէն շատ առաջ ամեն ինչ կարգադրուած է Պատրիարքի գաղտնի խոստման հաստատուն հիման վրայ և ժողովն լոկ ձեւակերպութիւն միայն եղած է :

Փոքրամասնութեան Տեղեկագիրն բացէ ի բաց կը մերժէ օտարօտի կաթողիկոսացումն՝ իւր հետեւեալ նշանաւոր պարունակութեամբ :

### Տեա՛րք Երեսփոխանք :

Ստորագրեալ անդամքս կաթողիկոսական Խորհրդարանական Յանձնաժողովոյ կոչուեցանք ի պաշտօն՝ ըստ հետեւեալ հրաւիրաւիրագրի Ամեն. Ս. Պատրիարք Հօր :

Ազգային Երեսփոխանական ժողովն Սեպտ. 20ի իւր վերջին գումարման մէջ լսելով Ս. էջմիածնի Սինոդին 1885 Օգոստոս 24 թուականաւ կաթողիկոսական ընտրութեան և Ամեն. Տ. Մակար Ս. Աւբեպիսկոպոսի Վեհ. Զարէն հաստատման տեղեկագիրն, և նկատելով որ կաթողիկոսական ընտրութեան այս անակնկալ էլից առջեւ իւր պարտաւորութիւնն էր—Ա. Պաշտպան կոնգրէիլ Հայաստանեայց Եկեղեցւոյ իրաւանց . Բ. Պահպանել Եկեղեցւոյ միութիւնն և Գ. Փրկել Ազգ. ժողովոյ արժանապատուութիւնն, որոշեց խնդրոյն վրայ ո՛ր և է վիճարանութիւն ընելէ առաջ՝ Եկեղեցական և աշխարհական երկոտասան երեսփոխաններէ Յանձնա-

ժողով մը կազմել, որ պաշտօն ունենայ Մեր նախագահութեան ներքեւ և ընդ ատենապետութեամբ Ազգային ժողովոյ առաջին Ատենապետի՝ այս ծանրակշիռ խնդրոյն պարագայներն քննել մասնաւորապէս օրէն, և Եկեղեցւոյ շահուց համաձայն եզրակացութեան մը յանգեալ, երթարկել զայն մասնաւոր տեղեկագրով մը Ազգ. ժողովոյ հաւանութեան :

Ըստ այսմ պաշտօնագրի, Սեպտ. 25 Զորեքշարթի օրէն սկսեալ, երկիցս ի շարթու ի նիստ դումարուելով երկարատեւ խորհրդակցութեամբ պարագայներ ի քննութիւն այս ծանրակշիռ խնդրոյն, որպէս զի ըստ յանձնարարութեան Պատ. ժողովոյ, Եկեղեցւոյ շահուց համաձայն եզրակացութեան մը յանգեալ տեղեկագրեմք զայն առ Ազգային ժողովը :

Հակառակ մեր անդադար աշխատութեանց՝ կարելի չեղաւ մեզ պայմանեալ ժամանակին մէջ աւարտել մեր աշխատութիւնն, որոյ մասին Պատկ. ժողովոյ ներողամտութիւնն կը խնդրեմք :

Թեպէտ և ամեն ջանք ի գործ դրուեցաւ, այլ անհնար եղաւ Գանձնաժողովոյ անդամոց ընդհանուր համաձայնութիւնն խնդրոյն մի քանի էական մասանց՝ և հետեւաբար եզրակացութեան վրայ :

Գանձնաժողովոյ անդամք, գրեթէ միաձայնութեամբ, թէ և այլ և այլ տեսակետերով, ընդունեցին թէ՛ Տ. Մակար Արքազանի ընտրութիւնն ազգային չէ. զի Ազգին ընտրեալ կաթողիկոսն է Տ. Մելքիսեղեկ Արքազան :

Ընդունեցին թէ՛ Տ. Մակար Արքազանի ընտրութեան մէջ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ օրէնքն ճշգիւ չէ գործադրուած. զի Հայ Ազգի աշխարհական դասն. որ ի Ռուսիա, ի Թուրքիա, ի Պարսկաստան և ի Հնդկաստան, բնա՛ւ մասնակցաց չէ սյդ ընտրութեան :

Ընդունեցին թէ՛ Տ. Մակար Արքազանի ընտրութիւնն բոլորովին հակառակ է կաթողիկոսի ընդհանրական հանգամանաց, զի սյդ հանգամանօք, այսինքն համօրէն Ազգին, եկեղեցակա՛նաց և աշխարհականաց մեծ-մտնութեմք և մտնակցութեմք ընտրեալն է Տ. Մելքիսեղեկ Արքազան :

Իսկ երբ խնդիր եղաւ Տ. Մակար Արքազանի անձնաւորութիւնն, յայնժամ կարծիքներն բաժնուեցան. զի Նորին Արքազ-

նութեան անձն անծանօթ էր մեզ, և Ազգ. Երեւփոխանական Ժողովոյ՝ հետեւելով ծանօթութեան, զոր ունէին մեր Ռուսիացի ազգայինք, պատշաճ չը դատեց դնել զանուն Ն. Սրբազանութեան ի շարս կաթողիկոսական երից ընտրելեաց. սյսպէս նաև Համազգային Ժողովոյ աշխարհական պատգամաւորք ո՛չ մի քուէ տուին Տ. Մակար Սրբազանի ընտրութեան, զոր կը հաստատէր կաթողիկոսական Փոխ-Տեղակալ և պատուիրակ Թուրքիոյ Հայոց Տ. Մկրտիչ Արքեպիսկոպոս Բաբամեանց՝ իւր պաշտօնական տեղեկագրով, Բայց ըստ որում Տ. Մակար Սրբազան ընդունեց Ռուսիոյ վէհ՛հ. Կայսեր ընտրութիւնն, որ չէր ազգային և համաձայն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ օրինաց և աւանդութեանց, և ըստ որում ցոյց տուաւ թէ պետական կամաց առաւել կը յօժարի անսալ և ո՛չ իւր առաքելական կոչման և ուխտին ի պահպանութիւն օրինաց և աւանդութեանց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, որ կաթողիկոսի մը սրբազան և սեպուհ պարտաւորութիւնն է. ուստի իրաւամբ պատճառ տուած եղաւ տարակուսելու իւր անձնական արժանեաց վրայ:

Գարձեալ անհամաձայն գտնուեցանք ի մասին թէ Ռուսիոյ վէհ՛հ. Կայսրն իւր օրինական սահմանին մէջ գտնուած է ընտրելով զՏ. Մակար Սրբազան ի կաթողիկոսութիւն Ամենայն Հայոց. — Ըստ որում Պալատէնիա անուն կարգադրութիւնն յԵրեւփոխանական Ժողովոյ Թուրքիոյ Հայոց իսպառ անընտանիք հռչակեալ և մերժեալ է, յամին 1868, և իբր Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ կարգացն, կանոնաց և հնաւանդ սովորութեանց թիւովն հարտի և Հայրապետական իշխանութեան և իրաւասութեան անուանիք և Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ մէջ օրարար կարգադրութիւն, որպէս նաև ընդ բողոքով արկեալ յամենայն Սրբազան կաթողիկոսաց. ըստ որում, անցեալ և այս տարի, ներկոյ Երեւփոխանութիւնն ևս 1866ի որոշումն վերահաստատեց և առանց հետեւելու Պալատէնիոյ տրամադրութեանց, մասնակցեցաւ կաթողիկոսական ընտրութեան. — հետեւաբար Ռուսիոյ վէհ՛հ. Կայսեր այդ ընտրութիւնն՝ Թուրքիոյ Հայոցս համար չէ օրինաւոր, ապա և է անընդունելի: Այդ ընտրութեան ընդունելութիւնն կը նշանակէ ընդունիլ զՊալատէնիան՝ իւր բոլոր փասակար յօդուածներովն և ջնջել յառաջագոյն կատարուած բողոքներն

ու մերժումներն , մինչ չ'ընդունին է գործնական բողոք , որ կը վերահաստատէ նախորդ բողոքներն :

Նշոյնպէս անհամաձայն գտնուեցանք ի մասին՝ թէ Տ. Մակար Սրբազանի կաթողիկոսացումն չ'ընդունիլ վնասաբեր է Եկեղեցւոյ միութեան : — Ըստ որում՝ հանդուցեալ Տ. Գեորգ կաթողիկոսի անուան յիշատակութեան յետ սյսորիկ ևս շարունակումն անբաժան կը պահէ զմեզ Ս. Էջմիածնի Մայր Աթոռէն և կը պահպանէ ազգային - եկեղեցական միութիւնն . տեղի չ'կայ երկնչելու այդ միութեան խզումէն , որպէս հաւաստեցին մեր պաշտօնակից Սրբազան Եպիսկոպոսունք :

Բաց այս երեք էական կէտերէն , յորս անհամաձայն գտնուեցանք մեր միւս ընկերաց հետ , նկատողութեան առինք նաեւ յեռնգասաբեան խնդիրն : Քանզի ինչ որ Ազգային չէ , ինչ որ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ օրինաց և աւանդութեանց համաձայն չէ , Թուրքիոյ Հայոց Երեսփոխանական Ժողովն ձեռնհաս է մերժելու , այլ անձեռնհաս է ընդունելու . և զի Սահմանագրութիւնն բացորոշ կը տրամադրէ , Յօդ. 28, Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնն և աւանդութիւններն ունիւոր պահել , մանաւանդ Ս. Պատրիարք Հայրն ուխտեալ է անթերի գործադրել զԱզգային Սահմանագրութիւն , Յօդ. 4, 8 :

Աւստի Պատկառելի Ժողովոյդ հաւանութեան կ'առաջարկեմք հետեւեալ բանաձեւն .

Թուրքիոյ Հայոց Երեսփոխանական Ժողովն

Նկատելով թէ՝ Պեսարապիոյ առաջնորդ Տ. Մակար Սրբազանի ընտրութիւնն չէ ազգային , այլ մանաւանդ բռնաբարումն է ազգային իրաւանց , հանդէպ ազգային ընտրութեան , որ կատարեցաւ յանձին Տ. Մելքիսեղեկ Սրբազանի ի կաթողիկոսութիւն Ամենայն Հայոց :

Նկատելով թէ Տ. Մակար Սրբազանի ընտրութիւնն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ օրինաց և աւանդութեանց չէ համաձայն , և Ամենայն Հայոց կաթողիկոսի ընդհանրական հանգամանաց հարմար է բոլորովին . զի այդ ազգային հանգամանօք ընտրեալ օրինաւոր կաթողիկոսն է Տ. Մելքիսեղեկ Սրբազան :

Նկատելով թէ Տ Մակար Սրբազան , ըստ իւրում՝ առաքելական կոչման և ուխտի , փոխանակ պատկառ կալու Ազգին կա-

մաց և Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ օրինաց և աւանդութեանց՝ օտար իշխանաւորի պետական տնօրէնութեան համակերպիլ նախընտրած է, որով Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ օրինաց և աւանդութեանց պահպանման մասին ո՛չ ևս կարէ լինիլ վստահելի :

Նկատելով թէ Տ. Մակար Սրբազանի կաթողիկոսական ընտրութիւն կատարուած է համաջայն Պալատէնիա անուն Ռուսական կարգադրութեան, որոյ փաստակար յօդուածներն ի սկզբանէ անտի մերժուած են յամենայն Սրբազան կաթողիկոսաց, և ի մասնաւորի՝ երկիցս իսլամ անընդհանրի հռչակեալ և ընդ բողոքով արկեալ են յԵրեւոփոխանական Ժողովոյ Հայոց Թուրքիոյ, « Իբրև Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ կարգաց, կանոնաց և Ֆնաւանդ սովորութեանց քրիստոսէ հակառակ, և Հայրապետական իշխանութեան և իրաւասութեան ամենայն ճանաչմամբ, և Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ մէջ օտարաճար կարգադրութիւն, զոր վերստին մերժած կը լինինք, համաձայն շահուց Ս. Եկեղեցւոյ, մերժելով զկաթողիկոսական ընտրութիւն Տ. Մակար Սրբազանի :

Նկատելով թէ Թուրքիոյ Հայոց Ազգային Սահմանադրութիւնն բացորոշ կը արամադրէ անխախտ պահել Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւններն :

Կ'որոշէ՝

Ա. — Թէ ո՛չ կարէ ընդունիլ զկաթողիկոսական ընտրութիւն Տ. Մակար Սրբազանի, զի Ազգին ընտրեալ կաթողիկոսն է Տ. Մելքիսեդեկ սրբազան :

Բ. — Թէ հարկ է շարունակել զյիշատակութիւն անուան Տ. Գեորգայ հանգուցեալ կաթողիկոսի :

25 Հոկտ. 1885  
ի կալաթա

Անդամք կաթող. Յանձնաժողովոյ  
Տեղեկարէր

Յ. ԳՈՒՐԳԷՆ

Ս. Պ. Պ. ՓԱՓԱՋԵԱՆ Մ. ԱՂԱԲԷԳԵԱՆ



# ԿՐԹԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Ե Ի

## ԴՊՐՈՑՔ ՀԱՅՈՑ Ի ՌՈՒՍԱՍՏԱՆ

Կրօնական ազատութեան վրայ խօսելէն զկնի՝ պարտք կը համարիմք խօսիլ Կրթական Ազատութեան վրայ. քանզի մեր հայ եղբարց, ինչպէս Կրօնական, նոյնպէս և Կրթական Ազատութիւնն բռնարարուած է ի Ռուսաստան:

Սարսափեցաւ ամեն Հայ, երբ լսեց, քանի մի տարի առաջ, թէ Հայոց դպրոցներն փակուած են Ռուս Կառավարութեան հրամանաւ: Այս հրամանն այնքան ծանր էր, որքան միւս կողմէն մեծ էր ժողովրդեան սէրն ու եռանդն դպրոցաց համար:

Եւրոպայի և Ամերիկայի մէջ հանապազօր կրկնուող Ռեսոնմն, Ռեսոնմն՝ ազազակներն արձագանք կը տային և կը կրկնուէին Ռուսաստանի մեջ: Ռուս Կառավարութիւնն տակաւ առ տակաւ կը բազմացնէր Պետական վարժարանաց թիւն: Ռուսիոյ Հայք եւս 40-50 տարիներէ ի վեր, իրենց ունեցած դպրոցներն կանոնաւորելով հանդերձ, սկսած էին ամեն հայաբնակ քաղաքներու և գիւղերու մէջ նորանոր դպրոցներ բանալ: Շարժումն ընդհանուր էր, քանզի ամեն մարդ

համոզուած էր թէ՛ նիւթական հացէն աւելի կարեւոր էր հոգեւոր հացն , բարոյական հացն , մտաւոր հացն - Լոյսն ու Քիտութիւնն :

Հայոց դպրոցներն , ի սկզբանէ անտի , Հայոց Հայրապետի անմիջական իշխանութեան ներքոյ էին և կը կառավարուէին ժողովրդէն ընտրուած և Հայրապետէն հաստատուած Հոգաբարձական ժողովներով , որոց նախագահն էր իւրաքանչիւր քաղաքի կամ գիւղի մէջ գտնուած՝ տեղական Առաջնորդն , կամ Յաջորդն կամ Երէցն : Բացի իւրաքանչիւր դպրոցի կամ դպրանոցի յատուկ Տեսչէն՝ կային նաև թեմական Տեսուչներ՝ Ս. Էջմիածնի Կաթողիկոսէն հաստատուած :

Այսպէս էր ահա՝ Հայոց ազգային կրթական վիճակն ի Ռուսաստան՝ երբ հրաման ելաւ Ռուս Կառավարութենէն Հայոց բոլոր կրթական հաստատութիւններն ենթարկել Պետական հսկողութեան և այս հրամանն ելաւ այն ժամանակ , երբ վախճանած էր Գէորգ Գ. Կաթողիկոսն , որ արդէն ի կենդանութեան պատասխանած էր Ռուս Կառավարութեան նմանօրինակ մի հրամանին : Հայք վրդովեցան և յուզեցան այս պետական հրամանին վրայ , քանզի այնպիսի մի հարուած էր , որ ուղղակի իրենց ազգային զգացմունքն ու պատիւն կը վիրաւորէր և իրենց ազգային էութիւնն կը վտանգէր : Հայք սպստամբած չ'էին , Հայոց դպրոցներն խաղաղութեան յարկեր էին միայն , ուր մանուկ սերունդն կը պատրաստուէր կրթուած հայ , բարեպաշտ Քրիստոնեայ և Հասարակութեան օգտակար անդամ լինելու : Հայոց վարժարաններն , իբր լոկ միջնակարգ և նախակրթական հաստատութիւններ , կա-

րող չէին բնաւ այն կասկածն իսկ յարուցանել, զոր Ռուս կառավարութիւնն շարունակ կը տածէ Ռուսական շամալսարանաց նկատմամբ : Հայոց վարժարաններն ժողովրդական պարզ հաստատութիւններ էին, յայտնի իրենց ծրագրով, յայտնի իրենց ընթացքով, յայտնի իրենց կրթական նպատակաւ :

Ահա այսպիսի մի յայտնի կացութեան դէմ Ռուս կառավարութեան բռնած ընթացքն խորին վիշտ կը պատճառէր ժողովրդեան, որ պետական նոր հրամանին տակ, ազգային էութեան խորտակումն կը նշմարէր քան թէ որ և իցէ շահաւոր կարգադրութիւն : Այս պատճառաւ ժողովուրդն չկամեցաւ համակերպիլ այս սպառնական հրամանին, որ կը հարուածէր միանգամայն ժողովրդի հաւատարմութիւնն և անտեսութեան կը մատնէր Ռուսիոյ փառաց համար կատարած զոհողութիւններն : Բայց ի՞նչ կարող էր առնել Հայ ժողովուրդն, քանի որ վարժարանաց վերին հսկողութիւն ու հոգածութիւնն Հայրապետական իրաւասութեան կը պատկանէր և Հայրապետն արդէն վախճանած էր : Ռուս կառավարութիւնն չէր ուզեր սպասել նոր Հայրապետի ընտրութեան և կաճապարէր իւր հրամանն իրագործել Էջմիածնի Սինօդի կամ հոգեւոր Վարչութեան միջոցաւ : Սինօդն չը կամեցաւ իւր վրայ առնուլ այս ծանր խնդրոյն սպասախանատուութիւն և առ այս հրաւէր կարդաց Ռուսիոյ Հայ Առաջնորդաց գալ գումարիլ յէջմիածին և հնարից ելք գտնել պատասխանատուութենէ ազատուելու համար : Ամեն Առաջնորդք փութացին յէջմիածին բացի Բեսարաբիոյ և Նախիջեւանի Առաջնորդ

Մակար և Վրաստանի ու Իմէրէթի Առաջնորդ Արիստակէս Եպիսկոպոսներէն :

Ս. Էջմիածնի մէջ գումարուած սոյն ժողովն, որ կազմուած էր Սինողականներէն և Թեմակալ առաջնորդներէն, յոյժ գովանի և օրինական կերպիւ վարուեցաւ, և անշուշտ Պատմութեան մէջ պիտի ունենայ իւր արժանի գնահատութիւնն :

Ժողովն նշմարելով պետական նոր առաջարկութեան ազգակործան հետեւանքն, և տեսնելով թէ՛ թափուր է մանաւանդ Հայրապետական Աթոռն, բացէ ի բաց մերժեց Պետական նոր հրամանի գործադրութիւնն, թողլով խնդիրն նոր Հայրապետի անօրէնութեան, յուսալով անշուշտ, որ նա ինքն եւս պիտի մերժէ ըստ հիմնաւոր իրաւանց Հայրապետութեան, ինչպէս որ կերեւի իւր ժողովի մի պատասխանագրին մէջ, ուղղեալ առ Ռուս Կառավարութիւնն : (1)

Սակայն, ինչպէս յետոյ պիտի տեսնենք, ժողովոյ յոյսն, որ իրաւանց վրայ հիմնուած էր, ի դերեւ ելաւ, երբ Ազգի Ընտրեալն կամ իրաւանց Կաթողիկոսն չը բազմեցաւ Հայրապետական Աթոռոյն վրայ, այլ Ռուսիոյ Ինքնակալէն Կաթողիկոս անուանեալն Մակար, որ պիտի դարձ վրէժ լուծել Ազգէն, զինքն չընտրելուն համար, և պետական գործիք լինիլ պետական հրամաններն կատարելու համար :

Ռուս Կառավարութիւնն տեսնելով Հայ ժողովրդի և հայ Հոգեւորականութեան դիմադրութիւնն իւր առաջարկն գործադրելու և Հայ վարժարաններն Պետական իշխանութեան ենթարկելու մասին, հրա-

[1] Տե՛ս ի Յ--Ել--մն Ա.

ման հանեց բոլոր վարժարաններն փակել :

Անհաւատալի կը թուէր այսպիսի մի հրաման , քանզի ո՛չ միայն ինքնին անմեղ էին աշակերտող ազգայք և աղջկունք , այլ և նոյն իսկ ծնողք յանցանք գործած չէին Տէրութեան դէմ , որ ասուէր թէ որդիք ծնողաց համար պատիժ կը կրեն : Անհաւատալի կը թուէր այսպիսի մի հրաման , աշակերտք և աշակերտուհիք կը շարունակէին իրենց ուսմունքն և անհնարին էր , որ ժողովրդի մէջէն մի ձեռք յանդըգնէր փակել այն , ինչ որ հազարաւոր ձեռքերով բացուած էր : Փակել դպրոցներն՝ կը նշանակէր փակել Հայու սիրտն , Հայու զգացումն , Հայու բերանն ու լեզուն , Հայու ներկայն ու ապագայն :

էր երբեմն որ Յագիկերտ հրաման կը հանէր փակել եկեղեցիներն , բայց դպրոցներու փակման հրամանն աւելի սոսկալի էր . քանզի եկեղեցիներն փակուած ժամանակ՝ Հայք անտառներն ու անձաւներն եկեղեցի կը դարձնէին և կ'աղօթէին , և կամ , ըստ Եղիշէի . « Իւրաքանչիւր ոք յանձն իւր եկեղեցի էր , նոյն ինքն քահանայ , մարմինք իւրաքանչիւր սուրբ սեղան և հոգիք նոցուն պատարագ ընդունելի . » բայց ո՞ւր պիտի դիմէին , ո՞ւր պիտի ուսանէին պատանեակք և պատանեկուհիք , մանկունք և աղջկունք : Սակայն ուր կարեկցութիւն չըկայ , անդ տրամաբանութիւն ևս չկայ , ուստի և Ռուս կառավարութիւնն իւր զինուորներուն հրամայեց փակել Հայ վարժարաններն :

կը շուարիմ , կը տատամսիմ վերստին պատկերել այն դառնազէտ տեսարաններն , որք տեղի ունեցան

դպրոցաց փակման ժամանակ և որոց սրահմիլի նկարագիրն բազմիցս հրատարակուեցաւ պարբերական թերթերու մէջ :

Տակաւին կը հնչեն ականջիս , կը դռչէր երբեմն Գրիգոր Նիւսացին , Բեթլէհէմի մանկանց կոտորածն նկարագրած ժամանակ , տակաւին կը հնչեն ականջիս մանկանց դռչումն ու ազազակն . . . Նոյնն կարող ենք կրկնել և մենք Ռուսաստանի Հայոց դպրոցաց փակման համար , մանաւանդ որ Նիւսացին կը նկարագրէր դարեր անցնելէն զինի՝ իսկ մերն տակաւին երեկեան է , և տակաւին իրարու հանդէպ են փակ դրունք և արտասուաթոր մանկունք : Տակաւին լսելի կը լինին նոցա ազազակներն ու հեծկլտանքներն , լալիւնն ու ողբումն : Տակաւին մեր աչաց առջեւ կը պատկերանայ այն սրտայոյզ և արտասուաչարժ տեսարանն՝ թէ ի՞նչպէս դրասեղաններուն և դասարանաց դռներուն կը փարէին աշակերտք ու աշակերտուհիք և չէին ուզեր բաժնուիլ դպրոցներէն : Տակաւին կը խռովեն մեր սիրան զինուորական սաստն ու սպառնալիքն , մատաղ տղայոց ու աղջկանց նուազումն ու թաւալումն :

Չկայ աշխարհի մէջ , պատմութեան մէջ , կրթական ապաստանարաններն փակելէ աւելի սոսկալի հալածանք և սակայն Հայոց դպրոցներն փակուեցան Ռուս կառավարութեան հրամանաւ , Ռուս զինուորաց ձեռքով :

Փակուած էին ահա՛ Հայոց վարժարաններն , երբ կաթողիկոսի ընտրութիւնն կատարուեցաւ , և երբ Ռուս կառավարութիւնն մեր տեղ (որ համօրէն Ազ-

գէն ընտրուած էինք ի վերայ հիման Առաքելական և Ազգային դարաւոր իրաւանց) Կաթողիկոս անուանեց զՄակար Արքեպիսկոպոսն Բեաարարիոյ և Նախիջեւանի : Վարժարանաց փակման առթիւ արդէն բեկուած էր Ազգին սիրտն , և ահա Եկեղեցւոյ իրաւանց բռնարարումն ևս յաւելցաւս՝ ի վերայ ցաւոց : Սակայն գտնուեցան մարդիկ , որոնք Ազգի վիշտն սփոփելու և Մակարի Կաթողիկոսացման դէմ գրգռուած ազգային յուզումն մեղմելու համար՝ ելան պատրանքներ հրատարակելու թէ՛ Հայ վարժարանաց խընդիրն լաւ վախճան կարող է ունենալ քանի որ Մակարն Ռուս Կառավարութեան սիրելին է և անուանեալն : Վարժարաններն արդէն փակուած էին . այս պատրանաց նպատակն էր Կաթողիկոսական խնդիրն ևս փակել : Սակայն Հայ ազգի խոհուն և զգայուն մասն արդէն իրագէկ էր և գիտէր ընդհակառակն թէ Մակարի կաթողիկոսացումն մի դաւադիր գրաւական էր Հայ վարժարաններն Ռուս Կառավարութեան յանձնուելուն կամ ճիշդն ասել Հայութեան համար խաղառ փակուելուն :

Շատ չ'անցաւ և ահա՛ իրականացան այս ամենատխուր կանխատեսութիւններն և Մակարի կաթողիկոսացման թմբկահար ախոյեաններն իսկ ափ ի բերան եղան կատարուած իրողութեան առջեւ :

Ս. — Արական և իգական սեռի միջնակարգ վարժարաններն իսպառ փակուած մնացին և նոր ծրագրով , Վեհ . Մակարի ստորագրութեամբ և Ռուս Կառավարութեան կարգադրութեամբ, բացուեցան միադասեան (միակարգ) և երկդասեան (երկկարգ) ծխա-

կան նախակրթարաններ կամ ծաղկոցներ, որոնք ո՛չ մի կապ չ'ունին փակուած վարժարանաց հետ :

Բ. — Սոյն ծխական աննշան կրթարաններն անգամ Ռուս կառավարութեան հսկողութեան ենթարկեցան, մինչդեռ բուն վարժարանք փակուեցան այն պատճառաւ, որ ժողովուրդն կամեցաւ կաթողիկոսի պնմիջական իրաւասութեան ներքոյ պահպանել, ինչպէս որ էին ի սկզբանէ անտի Հայ դպրոցներն :

Գ. — Թէև էջմիածնի շեմարանն և մի քանի Թեմական դպրոցներ իրենց գոյութիւնն պահպանեցին, բայց անկախ չ'են ինչպէս առաջ, և վճռուած է, որ նոքա ևս հանգոյն ծխականաց պիտի ենթարկին պետական Տեսչութեան և բոլոր կրթական պաշտօնեայք պիտի կոչուին կամ կ'արտաքսուին Ռուս կառավարութեան ընդհանուր Տեսչութեան միջոցաւ . իսկ օտար հպատակ մի Հայ թէ և բազմահմուտ՝ իրաւունք չ'ունի այսուհետեւ ուսուցանելու Հայ թեմական կամ ծխական վարժարանաց մէջ :

Դ. — Պետական դպրոցներէն բարձան հայերէն լեզուի և Կրօնագիտութեան դասախօսութիւնքն :

Ահա՛ այսպէս դիւրութեամբ լուծուեցաւ Հայ վարժարանաց կենսական խնդիրն ի Պնաս Հայութեան Մակարի Կաթողիկոսացման շնորհիւ և Մակարի ձեռամբ : Միադասեան եւ երկդասեան ծխական կրթարանաց բացումն մի պատրուակ եղաւ բուն կրթական էական խնդիրն մեռցնելու : Եւ արդէն սոյն նախակրթարանք ստեղծուած են աւելի Ռուս կառավարութեան նպատակին ծառայելու քան թէ Հայ ազ-

գութեան, մանաւանդ որ նշանակութիւն իսկ չունին Հայոց համար քանի որ չկան երեքդասեան և մինչեւ եօթն դասեան վարժարաններն, և եթէ յիշեալ նախակրթարաններէն ելած մանկունք կամեան յառաջ երթալ, պիտի պարտաւորին պետական դպրոցներն մտնել: Հետեւապէս Հայ ծխական նախակրթարաններն ո՛չ այլ ինչ են, եթէ ո՛չ պատուանդաններ Ռուսական դպրոցաց (1):

Ռուսաստանի Հայք և էջմիածնի թեմական Առաջնորդաց ժողովն շատ բնական և օրինական ճանապարհաւ վարուեցան, երբ վարժարանաց խնդիրն կաթողիկոսի ընտրութեան թողուցին. բայց ո՞վ կարող էր գուշակել թէ Ռուս կառավարութիւնն պիտի զիջանի Ազգի Ընտրեալն թողուլ և այնպիսի մէկն կաթողիկոս անուանել, որ կանխաւ խոստացած լինի միշտ պետական հրահանգով շարժիլ իւր գործառնութեանց մէջ: Ռուսաստանի ժողովուրդն քաջ կը ճանաչէր զՄակար և ո՛չ մի քուէ տուած չէր նմա. բայց երբ մտքէն կ'անցնէր թէ Պօլսոյ Պատրիարքն և քանի մի համախոհք բացառուրիւն պիտի ստեղծեն Մակարի կաթողիկոսացումն ընդունելու համար և փոխանակ պարծանք բերելու՝ փորձանք պիտի բերեն դպրոցաց գլխուն:

Սակայն Ռուսաստանի Հայն իսպառ չը վճատեցաւ և երբ տեսաւ թէ կաթողիկոսական խնդիրն ազգակործան լուծումն ունեցաւ և դպրոցական խնդրոյն համար բոլորովին անտարբեր է Պօլսոյ Պատրիարքարանն, ինքն Ս. Միւռոնի օրհնութեան առթիւ մի Հեռագիր

[1] Տես ի Յ-էլ-տէն Բ.

ուղղեց առ Տ. Մակար վեհափառն , դպրոցներն բանալ  
և պահել այն վիճակին մէջ , ուր էին իւր առաջնորդու-  
թեան ժամանակ : Սոյն նշանաւոր Հեռագիրն Ռուսաս-  
տանի Հայութեան սրտի ձայնն է , և այնչափ պատ-  
մական մեծ նշանակութիւն ունի , որչափ մտածենք  
թէ՛ Ռուսաստանի մէջ արտայայտուած է և ո՛չ Տաճ-  
կաստանի կամ մի ուրիշ ազատասէր Տէրութեան մէջ : (1)

Լուռ մնաց էջմիածնի Գահակալն մեր Ռուսիարնակ  
եղբարց ազգային զգացմանց բարձր յայտարարու-  
քեան առջեւ . լուռ մնաց և Յորութիւն Պատրի-  
արքն իրեն համամիտ եկեղեցականներով և ժողովա-  
կաններով , որոց համար ամեն բան Մակարի կաթողի-  
կոսացման մէջ կ'ամփոփուէր , ամեն եռանդն ու  
քաղաքագիտութիւն անտի կը բղխէր և յայն կը վե-  
րահոսէր :

Տխուր է արդարև այս տեսարանն ամեն տեսա-  
կէտով . — Ռուս կառավարութեան ջանքն Հայոց ազ-  
գային կրթական զարգացումն խամբելու և ջնջելու  
համար , էջմիածնի Գահակալին մեղսակցութիւնն սոյն  
ազգասպանութեան մէջ , Պօլսոյ Պատրիարքարանի  
դատապարտելի անտարբերութիւն և Ռուսիոյ Հայոց-  
դառնազէտ և մշտամորմոք վշտակրութիւնն :

Այս ամենատխուր տեսարանին առջեւ արիւն կը  
հոսի զգայուն Հայու սրտէն , երբ կը պատկերացնէ  
Ազգային զարգացման ընդհատման անդարմանելի հե-  
տեւանքներն և մանաւանդ երբ ինքն եւս քանի մի  
կաթիլ սուրբ քրտինք և արտասուք ցօղած է այդ  
կրթական զարգացման սուրբ անդաստանին մէջ :

[1] Տես ի Յ—Ե—Ն—Ն Գ .

1860 թուականին, Ազգային յառաջադիմութեան յուսով վառուած, և Հայոց լեզուի մշակութեան ու ծաւալման սերովն յափշտակուած, 'ի միջի այլոց, այս խօսքերն կուղղէինք 'ի Ռուսաստան Հայ մանուկներուն. « Հայկազուն մանկունք, դիմադրութիւններ և խոչընդոտներ կան մեր առաջին, որոց կարող ենք ընդդիմանալ և յաղթել միայն մեր Եկեղեցւոյ ազատական սիրով, մեր առաքինի հայրենասիրութեամբ և մեր Ազգային լեզուի մշակութեամբ, յաղթութեան պսակ ստանալով մեր Ազգի յարատեւ կենդանութիւնն ու բարոյական յառաջադիմութիւնն. . . . պէտք է զգանք, Հայկազուն մանկունք, որ Ազգի լուսաւորութեան այն մեծամեծ Բարերարներն, որոց անուններն կարգում ենք Պատմութեան մէջ և որոց արարքն մեզ զարմացնում է, նոքա բոլորն աշխատել են մեզ համար, մենք մտել ենք նոցա ժառանգութեան մէջ և ոտք ենք կոխել այն ճանապարհի վրայ, որ նուիրական է նոցա ընթացքով: Պէտք է իմանանք անշուշտ, որ ուր նոքա կանգնել են (կանգ են առեր) մենք պէտք է սկսինք, ուր նոքա հիմք են ձգել լուսաւորութեան, մենք պէտք է շարունակենք և մեր յետագայիցն աւանդենք 'ի կատար հասուցանելու ազգայնութեան այն հրաշալի տաճարն, որոյ վրայ արիւն քրտինք են թափել մեր երանելի Նախահայրերն »: (1)

Այսօր եւս, 28 տարիներէ զինի, կը թողունք անսիրտներն, որոնք առանց սարսուռ զգալու կը կրկնեն թէ վերջացած համարելու է Հայութիւնն 'ի

(1) Հայերէն Քերականութեան Գ. Մուրատեանց. Տիփսիս 1860:

Ռուսաստան , ինչպէս երբեմն 'ի Լեհաստան , և մեր խօսքն կ'ուղղենք նոցա , որոնք սիրտ կը կրեն , հոգի կը կրեն , որոնք Ազգի կենդանութեան գուշակներ են և ո՛չ մահուան և որոց մահուան բոստին իսկ Հայ անունն չը սառի իրենց ցուրտ շրթունքներուն վրայ , այլ կը հնչի անդր քան զմահ , անդր քան զգերեզման :

Քրիստոնէութիւնն կատարելութեան կրօնքն է . կատարելութեան հասնելու մի անհրաժեշտ պայմանն է ուսուցանելն և ուսանիլն : Քրիստոնէական Հաւատոյ Հիմն ու Քրիստոնէութեան Հիմնադիրն ինքն՝ Վարդապետ էր , Ուսուցիչ էր : «Գնացէ՛ք , Ուսուցէ՛ք» այս էր իւր պատուէրն իւր աշակերտներուն : Հետեւապէս , քրիստոնէական կոչման հետ անբաժան կապուած է ուսուցանելու և ուսանելու պարտաւորութիւնն : Քրիստոնէական եկեղեցւոյ և Գարոցի Հիմնաքարերն միասին դրուած են : Քրիստոնէութիւնն մի անընդհատ ուսուցչութիւն ու աշակերտութիւն է : Մեր Ս . Գրիգոր Լուսաւորչի գլխաւոր հոգածութիւնն եղաւ նորահաւատից համար իսկոյն դպրոց բանալ , ուր կը պատմուի թէ , կ'ուսանէր նոյն ինքն թագաւորն Տրդատ : Նորա յաջորդներն , Ս . Սահակ ու Մեսրոպ , իրենց աշակերտներով , վարդապետութիւն ու ուսուցչութիւն իրարմէ անբաժան ըմբռնած են : Նոքա , ո՛չ միայն եկեղեցական , այլ իրենց ժամանակին գտնուած ամեն կարեւոր ուսմունք ու գիտութիւն ուսած են եւ ուսուցած : Հայք միշտ հաւատացած են , որ իրենց Հայրապետի և Հոգեւորականութեան կոչման ու պարտուց անհրաժեշտ պայմանն

է լոյս և գիտութիւն ծաւալել ժողովրդեան մէջ : Այսպէս հաւատացած են , քանզի այսպէս տեսած են և այսպէս կը հաստատէ Հայոց Ազգի Պատմութիւնն : Մեր վանքերն մեծ մասամբ ուսումնավայրեր եղած են և իւրաքանչիւր Գաւառ , կամ քաղաք , կամ գիւղընդունած է այդ վանքերէն ո՛չ միայն հմուտ եկեղեցականներ , այլ և բարեկիրթ անդամներ Հասարակութեան : Բնաւ գոյութիւն ունեցած չեն Հայոց մէջ այն վէճերն թէ՛ կղերականի՞ն կը պատկանի ուսուցանելու իրաւունքն թէ՛ աշխարհականին : Քանզի Հայք ուսանելու և ուսուցանելու մէջ միշտ իրենց եկեղեցւոյ ոգով զարգացած և իրենց եկեղեցւոյ շաղով ընթացած են կրթութեան ասպարիզին մէջ , որ իրարմէ երբեք չը բաժնէր եկեղեցականն ու եկեղեցին : Եկեղեցի և եկեղեցականութիւն կամ ժողովուրդք և եկեղեցականք միշտ համերաշխ եղած են իրենց հոգւոր և մտաւոր զարգացման գործոյն մէջ : Այսպէս է նաև այսօր Հայոց Ազգի համար : Հայք ամեն տեղ ունին ազգային դպրոցներ իրենց անմիջական ինամակալութեան և հսկողութեան տակ . բայց Հայ պատանեակք կը յաճախեն նաև պետական դպրոցներն : Հայ պատանիներէն բազումք , արդէն զարգացած լինելով իրենց Վեղուի ու Կրօնի ուսմանց մէջ , հետամուտ եղած են բարձրագոյն վարժարանաց մէջ եւս վայելել կրթութեան և գիտութեան արգասիքներն : Նոքա ո՛չ միայն Ռուսական բարձր դպրոցներն յաճախած են և կը յաճախեն , այլ և Եւրոպիոյ նշանաւոր Համալսարաններն իսկ կը դիմեն , երբ իրենց միջոցները կը ներեն : Հայք մի երկիւղ միայն ունին , այն

է չկորուսանել իրենց լեզուն և իրենց կրօնական կամ  
դաւանական անկախութիւնն : Հայք հանապազօր  
կ'օրհնեն այն Տէրութիւններն , որոնք քաջալերած են  
և կը քաջալերեն միշտ Հայոց հոգեւոր , բարոյական  
և մտաւորական զարգացումն : Այս մասին անհուն է  
Հայոց երախտագիտութիւնն առ ժողովրդասէր Պե-  
տութիւնն Օսմանեան , որոյ բարերար հովանւոյն  
տակ ամեն ազգեր կը վայելեն կրօնական և կրթա-  
կան լիակատար ազատութիւն :

Անհնարին ցաւ է տեսնել , որ Ռուս Կառավարու-  
թիւնն Հայոց կրօնական և կրթական ազատութիւնն  
կը բռնաբարէ , Հայոց վարժարանները կը փակէ , Հա-  
յոց նախակրթարաններն ուսական նախակրթարա-  
նաց կալապարին կը վերածէ և պետական դպրոցներէն  
Հայոց լեզուի և Կրօնի դասերն կ'արտաքսէ : Եթէ  
կրթութիւնն մնասակար է Ռուս Կառավարութեան ,  
ինչո՞ւ ինքն օրաւուր կը բազմապատկէ Ռուս վար-  
ժարանաց թիւն լայնածաւալ Պետութեան մէջ : Եթէ  
մնասակար չ'է , ինչո՞ւ կը բռնաբարուի Հայոց Կըր-  
թական Ազատութիւնն , ինչո՞ւ կը փակուին վար-  
ժարաններն և կրթական իրաւասութիւնն կը խլուի  
Հայոց ձեռքէն :

Մի ժողովուրդ որ իւր ծախքով վարժարաններ  
կը պահպանէ , մի ժողովուրդ , որ բնաւ նիւթական  
ծանրութիւն չը պատճառէր Կառավարութեան իւր  
կրթութեան համար , այլ ինքնին խաղաղ քայլերով կը  
չարունակէ իւր բարոյական և մտաւոր յառաջդիմու-  
թիւնն , մի այսպիսի ժողովուրդ ինչո՞ւ զրկուի իւր ազ-  
գային դպրոցներէն , իւր ազգային զարգացումէն :

ինչո՞ւ կորուսուի, ինչո՞ւ անհետի երկրագնտի երեսէն, 4000 տարիէն աւելի յատուկ գոյութիւն ունենալէն զկնի, հալածակրութեամբ ու նահատակութեամբ իւր Եկեղեցին եւ Լեզուն պահպանելէն զկնի, իւր քրիստոնէական լուսով ու կեանքով՝ զինքն չըջապատող կամ իւր վերայ իշխող ազգերուն միշտ շահաւոր հանդիսանալէն զկնի: Ինչո՞ւ խլուի այսպիսի մի Ազգի Կրօնական և Կրթական ազատութիւնն և արմատէն կորուի այն ծառն, որ միշտ պտղաբեր եղած է և ո՛չ երբէք անպտուղ: Ի՞նչ յանցանք գործած է այդ Ազգն Մարդկութեան դէմ, Պատմութեան դէմ, նոյն իսկ Ռուս Կառավարութեան դէմ: Միթէ Ռուս Կայսերք, յատուկ հրովարտակներով յաճախ հռչակած չե՞ն Հայ Ազգի հաւատարմութիւնն ու մատուցած ծառայութիւններն: « Հայոց Ազգի սրտովին հաւատարմութիւնն» կը գոչէր Աղէքսանդր Առաջին, « ծառայութիւնքն և քաջութիւնք՝ քաղցր պարտք կը դնեն մեր վրայ յայտնել բովանդակ աշխարհի մեր իրաւացի երախտագիտութիւնն ու գոհութիւնն առ բոլոր անդամս այդ Ազգին, որք կը բնակին ի Ռուսաստան »: (1)

Չը կայ մի Պետութիւն, որ այնքան տարբեր ազգութիւններ կամ ցեղեր պարունակէ, ինչպէս է Ռուսաստանն: Չը կայ, հետեւապէս և մի Պետութիւն որ միջոց ունենայ մարդկային ազգի Պատմութեան մէջ այնքան փառաւոր տեղ գրաւել, ինչպէս է Ռուսաստան, եթէ ազատ թողու իւր հպատակ ազգաց Կրօնքն, ազատ թողու որ զարգանան իրենց յատուկ

(1) Տես ի Յաւելուածն Դ.

լեզուաւ և յատուկ տիպով :

Բայց թուի թէ Ռուս Կառավարութիւնն այդպիսի փառաց չը ցանկար , և թերևս կը ծիծաղի իսկ մեր սոյն պարզամտութեան վրայ : Ռուս Կառավարութիւնն այլուր կորոնէ իւր փառքն — իւր հպատակ տարրեր ազգերն՝ ի մի ձուլել՝ կրօնքով , լեզուաւ , սովորութեամբ , աւանդութեամբ , և այլն . քանզի Կրօնական և Կրթական ազատութեան բռնարարումն ուրիշ բան չը նշանակէր : Սակայն մենք Հայքս միթէ լուս և անշուկ ականատես միայն պիտի լինինք սոյն ազգասպան հարուածներուն : Միթէ պիտի չ'աղաղակե՞ք , չը բողոքենք , երբ կը տեսնենք թէ՛ այս ընթացքով , շատ չ'անցած , Սահակայ և Մեսրոպայ լեզուն այլ ևս պիտի չը հնչէ ո՛չ միայն Հայ կրթարանաց , այլ և Հայ գերդաստանաց մէջ ի Ռուսաստան : Միթէ տակաւ առ տակաւ պիտի չը մատնուի՞ն խժոժութեան նոյն իսկ մեր Սուրբ Տաճարաց բեմերն , ուր ընթերցողք ու լսողք պիտի չը հասկնան իրենց կարգացածն ու լրսածն : Միթէ լո՞ւս պիտի մնանք , երբ կը տեսնենք , երբ կը գուշակենք թէ մեր հայեցի հրաշունչ ու հոգեշունչ աղօթից , երգոց , նուագաց ու ընթերցուածոց տեղն պիտի բռնեն օտար լեզու և օտար հչմունք : Ո՛հ , միթէ չ'ենք սոսկար այն պատմական տխուր օրինակներէն , որ շատ տեղ Հայ լեզուն մնացած է միայն Եկեղեցւոյ պատերու , տապանաքարերու ու շիրիմներու վրայ :

Ամեն անգամ որ կը յիշեմ Լեհաստանի ուղեւորութիւնս և այն անմոռանալի օրն , երբ այցելեցի Լեմբերգի հայանուն Առաջնորդարանն ու Կուսաստանն ,

սիրտս կը խռովի , աչքերս կը տամկանան : Եկեղեցական գրքեր կը կարդային մօտս , ցոյց տալու համար որ Հայերէն ժամերգութիւնն պահպանած էին . բայց իրենք իսկ կը խոստովանէին , որ բնաւ չ'են հասկնար : Կուրախանային , որ մի հայ վարդապետ կը տեսնեն , բայց միանգամայն կ'արտասուէին , որ չ'են կարող հայերէն խօսիլ և հասկնալ : Եթէ սպիտակահեր հայախօս Մայրապետն ևս չը լինէր , միայն մեր հայ դէմքերն ու աչքերն պիտի մեր սրտերու զգացումներն արտայայտէին իրարու : Քանի կը յիշեմ այն օրն , սիրտս կալեկոծի . քանզի մի կողմէն կ'ուրախանայի որ այդ մուցուած շայութեան մէջ տակաւին սէր կը նշմարէի առ ազգութիւնն . իսկ միւս կողմէն չ'էի կարող արտասուքս զսպեւ , երբ կը տեսնէի թէ հայ լեզուն գրքերու մէջ միայն մնացած է և ո՛չ ի շրթունս կենդանի հայութեան , և մանաւանդ երբ խորազգաց թախծութեամբ կը գուշակէի թէ կարող չ'է տեւական լինիլ այդ կէտին հասած մի ազգութիւն ( ինչպէս որ շատ տեղ Լեհաստանի գաղթականաց միայն տապանաքարերն մնացած էին ) եթէ շուտով դարման չը մտածուի :

Մինչդեռ մենք նոյն ժամանակ ազադակ կը բռնայինք ազգային պարբերականաց միջոցաւ՝ այս Գաղթականաց մէջ իսկ հայութեան խօսքն ու լեզուն արծարծելու համար միջոցներ խորհիլ , այսօր կը տեսնենք , որ Ռուս Կառավարութիւնն Հայութեան առջեւ կը փակէ Հայ Վարժարանն , կը փակէ կերպիւ իւրիք Հայ Եկեղեցին և կառաջնորդէ դէպ ի այն վիհն անյիշատակութեան , ուր կը գլորին իրենց Կրօնական ու Կրթական Ազատութենէն զրկուող ազգերն , իրենց

Եկեղեցիէն ու Լեզուէն օտարացող ժողովրդներն :

Արդ՝ ամեն Հայ , որ Հայու սիրտ կը կրէ և Հայու արիւն ունի . ամեն Հայ , որ չ'ուզեր որ մեր Նախահայրերէն մնացած երկու ամենաթանկագին աւանդներն — Եկեղեցին ու Լեզուն — թաղուին ու անհետին ի գուրն անյիշատակութեան , պէտք է տքնի , պէտք է խորհի , պէտք է աղաղակէ , պէտք է ամեն ճիգ թափէ վտանգէ ազատել Հայ Եկեղեցին ու Գալրոցն 'ի Ռուսաստան : Կան պաշտօնական միջոցներ , կան օրինական և իրաւաբանական միջոցներ , կայ նաև ազերսանաց և աղաչանաց միջոցներ : Ծերունին Պրիամոս իւր որդի Հեկտորին դիակն Աքիլլէսէն ստանալու համար՝ համբուրեց Աքիլլէսի ձեռքն , այն ձեռքն որ դիւթաւալ կործանած էր զՀեկտոր : Աքիլլէս սարսուաց , Աքիլլէս լացաւ և հրամայեց հօրն տալ որդւոյ մարմինն , զոր քաղաքի մէջ շրջեցնել կըտար 'ի նշան ամենամեծ յաղթութեան :

Միթէ չ'ե՞նք կարող յուսալ , որ Ռուսիոյ Ինքնակալն ևս կը զիջանի Ազգին վերադարձնել իւր հարուածեալ՝ բայց ո՛չ անշնչացեալ Կրօնական և Կրթական Ազատութիւնն , երբ նշմարէ թէ Հայ Ազգն իւր իրաւունքն ստանալու համար շարժուած է այն հզօր և անդիմադրելի փափաքով , ինչպէս էր Պրիամոս : Երբ տեսնէ թէ Հայք պիտի չը լռեն , պիտի դիմեն ամեն տեղ ամեն Վեհապետաց , որոց հովանույն տակ կը գտնուին , պիտի նոցա միջնորդութիւնն հայցեն , պիտի աղաղակեն , պիտի ձանձրացնեն , մինչև որ Հայ Եկեղեցին ու Գալրոցն այն ազատութիւնն վայելեն 'ի Ռուսաստան , զոր վայելած են ամեն դարուց և ժամանակաց մէջ , և զոր այժմ կը վայելեն ամեն երկրի մէջ՝ բաց 'ի Ռուսաստանէն :

# ՅԱԻԵԼՈՒԱԾ

Արժան կը համարիմք, 'ի հաստատութիւն մեր գըրածներուն, յառաջ բերել այս տեղ քանի մի կարեւոր և նշանաւոր գրուածքներ, որոնք Հայ վարժարանաց խնդրոյն կը վերաբերին և արդէն հրատարակուած են :

Ա. — Պատասխանագիր Ս. Էջմիածնի Սինոդին առ, Կառավարչապետն Կովկասու .

«Հաղորդագրութիւն Ձերդ Պայծառափայլութեան որ 31 Յուլիսի տարւոյս ընդ համարաւ 1062, յաղագս 'ի կատար ածելոյ անմիջական իշխանութեան Սինոդիս Էջմիածնի զկանոնս վասն եկեղեցական Հայ գըրուոցաց, համաձայն սահանջման առ այս Նախարարութեան Ներքին Գործոց՝ յանեւանելի վիճակ կացոյց զՍինոդս :

«Սինոդս ծանուցմամբ 'ի 24 Մայիսի տարւոյս համարաւ 1243, պատիւ կալաւ 'ի գիտութիւն հասուցանել Ձերդ Պայծառափայլութեան՝ թէ զգործս եկեղեցական-ծխական դպրոցաց մերոց անմիջապէս վարէր 'ի Տէր հանգուցեալ Ծայրագոյն Պատրիարքն և Կաթողիկոսն ամենայն Հայոց, հետեւելով օրինակի Նախորդաց իւրոց :

«Ծայրագոյն Պատրիարքունք գլուխ կացեալ Սըրբոյ Եկեղեցւոյ Հայաստանեայց ըստ կանոնաց և դարաւոր աւանդութեանց նոյն Եկեղեցւոյ, նուիրականս

եղելոց նաեւ օրինադրութեամբ Ռուսիոյ, յանձինս բառնան զգլխաւոր հոգատարութիւնն Կրօնական-բարոյական կրթութեան Հայ Ազգի և մանկանց Նորին՝ ցուցանելով զճանապարհ խաղաղ և առաքինի կենաց և հնազանդութեան օրինական իշխանութեանց համաձայն վարդապետութեան Ս. Աւետարանի :

«Առ այս 'ի սկզբնաւորութենէ անտի Քրիստոնէութեան դպրոցն նամարեալ է նախադուռնն Եկեղեցւոյ, և Կաթողիկոսունք 'ի գլուխ կացեալ Եկեղեցւոյ կառավարեալ են և զդպրոցն՝ վասն որոյ և յամենայն ժամանակս Հայ Եկեղեցական դպրոցք բացեալ և հաստատեալք են կոնդակօք Կաթողիկոսաց և ինքեանք Կաթողիկոսունք տուեալ են զհրահանգս և զկանոնս վասն այդոցիկ դպրոցաց, առանց որ և է միջամտութեան և մասնակցութեան Սինօդի Էջմիածնի :

«Յորժամ յամին 1874 խնդիր եղեւ կատարման Բարձրագոյն 'ի 23 Նոյեմ. 1873 ամի հաստատեալ կարծեաց Պետական Խորհրդոյն վասն ենթարկելոյ զՀայ Եկեղեցական-ճխական դպրոցս հսկողութեան (արքունի) Վերատեսչաց ժողովրդական դպրոցաց, Կովկասեան գլխաւոր Կառավարութիւնն 'ի սկզբան ընդ Սինօդիս եմուտ 'ի գրագրութիւն և 'ի ծանուցանել վերջնոյս զո՛չ ունիլ իւր իրաւունս միջամտուեան 'ի սոյն օրինակ գործս, զչարունակութիւն թրջթակցութեանն ուղղեաց առ երջանկայիշատակ Գէորգ Կաթողիկոս :

«Գործադրութիւն նորոց կանոնաց ունի փոխոխել զոր այժմս է կազմակերպութիւն Հայ ճխական-եկեղեցական դպրոցաց, սահմանեալն իշխանութեամբ

Մայրաքոյն Պատրիարք-Կաթողիկոսաց, իսկ միջամբ-  
տել 'ի գործ իշխանութեան Գլխոյ Հայաստանեայց Ե-  
կեղեցւոյ՝ Սինօդս, որոյ անդամք հոգեւորականք  
ստորադրին Գլխոյ Եկեղեցւոյն, չ'ունի իրաւունս եւ  
չ'կարէ ենթարկել զինքն ծանր պատասխանատու-  
թեան առաջի Եկեղեցւոյ և խղճի իւրոյ :

«Ուստի յարգոյաբար յայտնելով Ձերում Պայծա-  
ռափայլութեան, Սինօդս խոնարհաբար խնդրէ յար-  
գել զխնդիր Սինօդիս և այնու ազատել զՍինօդս 'ի  
ներկայ յանելանելի վիճակէ » :

15 Սեպ. 1884, Թիւ 2451,

### Տեղ. Ատենապետի Սինօդի

ՄԿՐՏԻՁ ԱՐԳԵՊԻՍԿՈՊՈՍ

#### Անդամք

ՄԵՍՐՈՎՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՅՈՎԱԿԻՄ »

ԵՐԵՄԻԱ »

ՆԵՐՍԷՍ »

ՄԱՄՐԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Սինօդն զպրոցական խնդրոյն նկատմամբ հետեւե-  
տալ հեռագիրն ևս կուղղէ առ Կառավարչապետն կով-  
կասու .

«Սինօդս պատիւ ունի յարգանք յայտնել Ձերդ  
Պայծառափայլութեան, զի որպէս բազում անգամ  
խոնարհաբար յայտարարեալ է՝ Թէ Անդամք Նորին

չ'համարեն ինքեան զիրաւունս անցանել զիրաւասութեամբ Պատրիարք-Կաթողիկոսի, որ նուիրական է վասն Հայաստանեայց Եկեղեցւոյ, զնոյն կրկնէ եւ այժմ, թողլով զանօրէնութիւն կանոնաց հաստատելոց 'ի 16 փետր, 1884 ամի, 'ի բարեհաճ նկատողութիւն բարեխնամ Կառավարութեան ։

### Տեղ. Ատեմապետի Սինօդի

ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

### Անդամ

ՄԵՍՐՈՎ,Բ ԵՊԻՍԿՈՊՈՍ

22 Փետր. 1885,

Բ. — Արեւելք լրագրի 773 թուոյն և Արեւելեան Մամուլ հանդիսի 1886 ամի Օգոս. ամսաւետրին մէջ հրատարակուած է հետեւեալ յօդուածն, որ Պետրոսբուրգէն գրուած է և արժանի է ամեն Հայու խորին ուշադրութեան ։

Վեց եւթն ամիսներէ ի վեր է որ Հայոց ժողովրդի մէջ շարունակ լուրեր էին տարածում թէ՛ շնորհիւ Վեհ. Մակար Կաթողիկոսի նորէն բացուելու են Ռուսահայոց գոցուած գաղոցներն ։

Այժմ միայն, երբ տեղի ունեցած գաղոցական տխուր արկածքէն անցած է աւելի քան մի տարի ու կես, Հայ լրագրերում երեւան է գալիս մի 'պաշտօնական գրութիւն' ուսումնաբանների իբր թէ բացուելու մասին ։

Ուշադրութեամբ կարդալով « Հայոց Միական Ուսումնաբանների այդ կանոնները » մեծ զարմացմամբ տեսնք, որ դոցա և ոչ մի տողն մեզ բնաւ երբէք չ'է յիշեցնում նախկին փակուած

ուսուսմնարանների վերաբացուիլն , այլ թէ ուսուսմնարանների վերաբացման խրոխտ առարկուածիւնների տակ՝ միւս ամսէն բացուելու են մի կարգ ծխական երկդասարանեայ պարզ պարզ դըպրոցներ , որոնք բնաւ ո՛չ մի կապ , ո՛չ մի յարաբերութիւն չունին Ռուսաստանոց յիսնամեայ անդուլ ջանքերով նախանձելի վիճակի հասցրած այն խիստ արդիւնւշատ ուսուսմնարանական վայրերի հետ , որք այնպիսի անխղճօրէն փակման տխուր դրոշմը կրեցին իւրեանց վրայ 1885 թուականին փետր. ամսի վերջերն :

Այսպէս ուրեմն , աւելի քան յիսնամեայ պատկառելի մի ժամանակամիջոցում Ռուսաստան երիտասարդութեան անձնուէք ջանքերով զանազան արգելառիթ խոչընդոտների մէջ գոյութիւն առած , անուած , փայփայուած , մանկութիւնից երիտասարդութեան հասակն առած Ռուսաստանոց դպրոցն , որն այդ կէս դարում մի ամբողջ ազգաբնակչութեան հոգին ու շունչն է եղած , մի անգամ ընդ միշտ դարձաւ Եւրոպական սանձաւոր գլխաւորապէս շնորհիւ մի յայտնի Ռուս պաշտօնեայի ստոր խարդաւանանքների ու լիբր ցանկութիւնների : Եւ այս բոլորի առաջն , որ կարող էր առնել մի բարձրատիճան Հայ պաշտօնեայ՝ կաթողիկոսական Տեղապահ և ապա կաթողիկոս , որ և նորա սուկ նուիրական պարտքն էր , չ'արաւ , և այդպիսով Ազգի կէս դարու մտաւոր բարոյական կեանքի պտուղն , նորան կեանք , կենդանութիւն ներշնչող դպրոցը գոցվում ու համարեա բնաջինջ է լինում Վեհ. Մակար կաթողիկոսի օրով , շնորհիւ նորա անտարբերութեան , որ , ինչպէս յայտնի կը լինի վերջն , հետեւանք է նորա փառասիրութեան :

Ահա՛ ինչու :

Պատմենք ամենայն անաչառութեամբ և փոքր ի շատէ մանրամասնօրէն :

Ռուսաստանըրը մինչ անցեալ տարւոյ փետր. 25, երբ տեղի ունեցաւ մծա 600 Ռուսաստանոց դպրոցների փակումն Ռուսիոյ կառավարութեան ձեռք , բաց ի Գէորգեան ձեմարանէն և 5—6 թեմական դպրոցներէ , ունէին երեք կարգ դպրոցներ :

Ա. — Յոյժ կանոնաւոր 6—7 դասարաններէ բաղկացած օրի-

որդական ուսումնարաններ . օրինակ , Գալիանեան , Յոզիանեան Թիֆլիզի մէջ :

Բ. — Երեք չորս դասարաններէ բազմաթիւ երկսեռ դպրոցներ :

Գ. — Մի և երկու դասարաններէ բաղկացած երկսեռ դպրոցներ . նոցա կարգումն են և գիւղական դպրոցներն : Բաց ի սյս կարգ ուսումնարաններից՝ շատ քաղաքներում գոյութիւն ունէին և այսպէս ասուած « Մանկական պարտեզներ» ուր մանչ և աղջկունք Հայ օրիորդների ջանքերով խիստ գիւրին և կենդանի կերպիւ , զանազան խաղերի միջոցաւ , ամենատարրական ուսումն կ'առնէին : Այս մանկական պարտեզների մի առաւելութիւնն էլ նորանում էր կայանում , ուր շատ մանչ ու աղջիկ , որոնք Հայերէն չ'էին իմանում , կամ դժուարութեամբ էին խօսում , այս բնասանկան յարկի բնաւորութիւն կրող պարտեզներում կատարելապէս սովորում , խօսում ու գրում էին իրենց մայրենի լեզուով : Թողունք նոցա երգեցողութիւնն , որի ազգեցութիւնն ամեն տեսակէտէ բարձր է :

Այս բոլոր դպրոցներն , ինչպէս և թեմական դպրանոցներն կառավարվում էին ժողովրդից բնորուած Հոգաբարձուների ձեռքով և ենթարկվում էին Հոյ Հոգեւոր իշխանութեան : Կասառուք նշանակվում էին բոլոր սյն անձիք , որոնք համապատասխան էին գտնվում իրենց կոչմանն , թէեւ մասամբ շատերն առանց վկայականների էին :

Ամեն մի վիճակի դպրոցները կանոնաւոր վիճակի մէջ պահելու նպատակաւ , որպէս հսկող մարմիններ , Հոյ Հոգեւոր կառավարութիւնից նշանակվում էին թեմական Տեսուչներ , որոց պարտաւորութիւնն էր շարունակ սյցիլէլ իրենց յանձնուած դպրոցները :

Սոցա վրայ նոյնպէս պարտաւորութիւն էր դրուած հրուիրել ու արձակել Աւսումնարանների ուսուցիչներն և ուսուցչուհիներն :

Գալով դպրոցական ծրագրին , պէտք է ասած , որ Հայ դպրոցական վարչութիւններն թէեւ բնդհանրապէս չունէին մի որոշ ծրագիր , բայց և սյնպէս շարունակ երկար տարիների համար յօրինում էին բաւականին նպատակայարմար լուրջ , բայց մի և

նոյն ժամանակ համեստ ծրագրեր, համապատասխանեցնելով զայնս Հայ մանկաւոյն բնութեան և մանկավարժական արգասաւորութեան :

Ամեն ուսումնական տարուայ վերջերում՝ Հոգեւոր կառավարութիւնն թեմական Տեսուչների միջոցաւ Ռուս կառավարութեան կը ներկայացնէր մի ընդհանուր Տեղեկագիր ուսաստանայ դպրոցների ուսման և վարչութեան նկատմամբ :

1884 Փետր. 16ի ուսական օրէնքի համաձայն , որի հետեւանքն ուսումնարանների փակումն եղաւ , Ռուս կառավարութիւնն ցանկացաւ սահմանափակել Հայ Հոգեւորականութեան իրաւունքներն դպրոցների վարչութեան նկատմամբ : Աւելի պարզ ասելով , այդ օրէնքի զօրութեամբ Հայ Հոգեւոր իշխանութեան իրաւասութիւնն , դպրոցական ինդրում , մինչ այն աստիճան սահմանափակ վիճակի էր դրվում , որ նա դադարում էր այնուհետեւ տէր դասնալու իրեն պատկանող դպրոցներին , ընայելով որ ուսումնարանների գոյութիւնն պահպանելու համար բոլոր ստակը մատակարարելու էին Հայ ժողովուրդն ու Հայ Եկեղեցւոյ կալուածներն , ուր գտնվում էին այդպիսիք :

Այս տեղէն պարզ երևում էր , որ այսպիսի պայմանների մէջ Հոգեւոր կառավարութիւնն կոչուած էր նուաստ միջնորդի դեր կատարելու և դպրոցների նիւթական միջոցի հոյժայթելուն հետամնու լինելու :

Եթէ Հոգեւոր կառավարութիւնն ընդունէր բոլոր այն խիստ աննպաստ պայմաններն , այն ժամանակ բոլոր ուսումնարաններն շարունակելու էին իրենց գոյութիւնն :

Մի երկու խօսքով յիշենք ընթերցողին այն պայմաններն , հոգեւորականութեան իրաւունքների սահմանափակումն , որ Ռուս կառավարութիւնն առաջարկած էր մեզ ընդունելու :

Ուսուցիչներն և թեմական Տեսուչներն նշանակուելու և արտաքրուելու էին Ռուս կառավարութեան ցանկութեամբ , թէև Հայ Հոգեւոր կառավարութեան միջոցաւ . այնպէս որ ամեն մի բոպէ Ռուս կառավարութիւնն իրաւունք ունէր իսկոյն հեռացնել իրեն աննպաստ նկատած այս կամ այն ուսուցիչն , Տեսուչն իրենց պաշտօններէր : Սրբա անպատճառ Տէրութեան բարձրագոյն Ուսումնարաններում պէտք է կրթուած լինէին և վկայական առած :

Թեմական տեսուչներ , որ մինչև այն ժամանակ նշանակվում էին աշխարհականներից , այժմ նշանակուելու էին Ռուս-Սերբիական հոտորակի հետապնդողները : ( Եւ տակաւ առ տակաւ անշուշտ Ռուս հոգեւորականներից ) :

Ամեն ժամանակ դասաւանդութեան միջոցին , այդ կանոնների զօրութեամբ , ուսու պաշտօնեաներին լիակատար իրաւունք էր տրվում ներկայ գտնուելու Հայոց բոլոր դպրոցներում դասախօսութեան միջոցում և այդպիսով անկասկած շարունակ խոչընդոտներ էին յառաջ գալու , որի հետեւանքներն լինելու էին կամ յաճախ ուսուցիչներն արձակել , երբ նոցա դասախօսութիւնն հաճելի չ'է եղել ուսու պաշտօնեային կամ թէ ուսուցիչներն ըստիպուած պէտք է լինէին ո՛չ անձնուէր ծառայելու դպրոցին , որ արտաքսուելու սպառնալիքէ ազատ մնային :

Ուսումնարանների ծրագրերն ամեն կէտով պէտք է համապատասխանէին Ռուս կառավարութեան Ուսումնարանների ծրագրին : Ամեն մի նոր ծխական դպրոց բանալու համար մեծ դժուարութիւնների էր հանդիպելու Հայ Հոգեւորականութիւնն :

Ուստի ինչպէս իսկ արտաքին կողմէն երեւումէ , որ և է մի պարտաճանաչ ազգային մարմին , որպիսին ներկայացաւ այդ ժամանակ Էջմիածնի Սինոդն , չէր կարող ընդունիլ այսպիսի ճնշական պայմաններ . որպէս մեր օրերում ընաւ չտեսնուած մի վեհանձն անձնուիրութեամբ , Հայ Հոգեւորականութիւնն մերժեց այդ նոր կանոնադրութիւնն , թէեւ նախօրէն իսկ Ռուս կառավարութեան կողմից խիստ սպառնալիքներ էին տեղում Սինոդական հարց գլխին , որոնք համարձակութիւն կուենային դիմադրու Պետերբուրգից յայտնած Բարձրագոյն տնօրէնութեան : Սակայն մինչ Սիպերիա քշելու սպառնալիքի առաջ Հայ հոգեւորականութիւնն չվարանեց մերժել նոր կանոնադրութիւնն , իւր համարեալ թէ « չ'ենք կարող » ազդու պատասխանով :

Ազգի կողմից այս մերժումն , ինչպէս յայտնի է , խիստ խոր տպաւորութիւն արաւ թէ՛ կայսերական կառավարութեան վերայ և թէ՛ պաշտօնական ու պաշտօնական գոյն կրող թերթերու վրայ : Օր ըստ օրէ Ռուսաստան ժողովրդի արդարացի յուզմունքն դպրոցների փակման առթիւ , որ տեղի ունեցաւ անմիջապէս Սինոդի մերժողական պատասխանն առնելէ զվնի , հասաւ այն աս-

տիճան դժգոհութեան դէպ ի կառավարութիւնն , որ այս վերջինս ակնյայտնի ստիպուած եղաւ մի կերպ Հայ ժողովրդին գոհացում տալ : Այս նպատակաւ կովկասեան կառավարութիւնն 'ի դիմաց Բարձրագոյն կառավարութեան թիֆլիզի կառավարչական թերթի միջոցաւ դիմեց Ռուսահայ ժողովրդին առջարկելով , որ Հայերը փակուած դպրոցների փոխարէն , եթէ կամենան , ամենայն հաճութեամբ կարող են բանալու չորս և ութ դասարաններէ բաղկացած երկրորդական ուսումնարաններ , այն է պրօգրամնազիս և գիմնազիաներ : ուր դասախօսութիւն կը լինի Հայերէն լեզուով՝ որպէս տղայոց , նոյնպէս և օրիորդաց համար : Ուստի եթէ Հայ ժողովուրդը կամենում է այս կարգ նոր դպրոցներ ունենալ փակուած դպրոցների փոխարէն , այն ժամանակ թող խնդրագրով դիմէ կառավարութեան , որ ուրախութեամբ կընդունի : (Չարմանալի է , թէ ի՞նչու հրաման չ'է տրվում , որ նոյն իսկ փակուածներն բացուին : )

Ռուս կառավարութիւնն այս առաջարկութիւնն նոր դպրոցներ բանալու համար , որ աւելի լաւ է ասել այս զիջողութիւնն , որոյ մասին խօսեցաւ նաև Պետերբուրգում հրատարակուող մի Ռուս թերթ , պարզօրէն ցոյց է տալիս թէ՛ եթէ Հայ հասարակութիւնն իւր գործերում շարունակ անտարբեր չը գրտնուի , նոյն իսկ ամենազօրեղ պետութիւնն անգամ՝ տրամադիր է լինում զիջանելու 'ի նպաստ Ազգին . բայց թէ պէտք է ասել , որ կառավարութեան սոյն առաջարկն անտես առնուեցաւ ժողովրդի ներկայացուցչների կողմէն , գլխաւորապէս նորա համար , որ մեծ յոյս կար թէ նպատակայարմար կաթողիկոս ընտրելով , կարելի կը լինէր նորէն միջամտել՝ բանալու փակուած դպրոցները : Վերջապէս , որպէս յայտնի է , կոյացան կաթողիկոսական ընտրութիւններն , այնպէս թէ այսպէս կաթողիկոս անուանեցաւ Մակարն և սպասվում էր , որ բաւարար լուծումն առնէր դպրոցական խնդիրն , մանաւանդ որ թէ Մակարի կողմէն անձամբ և թէ իւր կողմնակիցներէն շարունակ յայտարարութիւններ , խստումներ կը տեղային ամեն կողմն , թէ Նորին Վեհափառութիւնն շուտով Ռուսումնարանի վերաբացման իրաւունքն կ'առնու և այնու կը բացուին դպրոցներն իրենց նախկին դրութեամբ : Չնայելով որ օր օրի վրայ այս առարկութիւններն կը կրկնուէին

և կը պաշտպանուէին Մակարի կուսակիցներէց . սակայն կային մարդիկ , որ բնաւ հաւատ չ'էին ընծայում այս առարկութիւններին , քանի որ ամեն կողմէն նոքա շատ լաւ կը ճանաչէին թէ ի՞նչ է Մակար կաթողիկոսն , ինչպէս որ վերջապէս իրողութիւններն հաստատեցին սյսօր, որ Մակար, դպրոցներն նոյն ծրագրաւ չ'բանալէն զատ , այլ նաեւ իւր միջամտութեամբ մի խիստ հարուած տուաւ Ռուսահայ դպրոցական խնդրին :

Ահա՛ ինչպէս :

Ենորջիւ Մակար կաթողիկոսի , Ռուսահայոց կէս դար գոյութիւն ունեցող ուսումնարաններն միանգամայն դադարեցան այլ եւս կանգուն մնալու , ըստ որում այսօրուան օրս Ռուսահայերը չ'ունին այլ եւս ս'չ օրինակելի մանկական պարտէզներն , չ'ունին նախկին ծրագրաւ մի և երկդասարանեայ ծխական դպրոցներն , չ'ունին երեք և չորս դասարաններէ բաղկացած տղայոց ևս օրիորդաց դպրոցներն , ինչպէս և յաւիտեան բնաջինջ եզան վեց , եօթն դասարաններէ յոյժ նախանձելի վիճակի մէջ գտնուած Հայ օրիորդական դպրոցներն : Գարգելի ընթերցող , պէտք է անձամբ անձին տեսնէիր Հայ Օրիորդաց առաջնակարգ դպրոցներն , նոցա ծրագրերն և այդ ուսումնարանների սանուհիներն , այն ժամանակ միայն սրտիցդ մի ծանր ա՛խ կը հանէիր և աչքերէդ արտասուքներ կը տեղային :

Մեծ հարուած տուաւ Մակար կաթողիկոսն Ռուսահայոց դպրոցական գործին , ըստ որում նախ որ հակառակ իւր հաւատակուն՝ անկարող գտնուեցաւ նորէն բանալու փակուած դպրոցները , մինչեւ անգամ որ եւ է փոփոխութեամբ . երկրորդ նա իւր համաձայնութիւնն տալով երկու դասարանէ դպրոցներ բանալու՝ խիստ սահմանափակ պայմաններով միանգամայն վերջ տուաւ այդու ամբողջ երկու տարիի չափ Ռուսահայոց յուզող ամենակենսական մի խնդրին , որն թերեւս ինչ ինչ դէպքերի տակ իւր բաւարար լուծումն առնէր :

Մեր կարծիքով քանի որ Մակար , հակառակ ազգի կամքին , իւր վրայ մեծ պարտականութիւն առաւ և երկու դասարաններէ ծխական դպրոցներ բանալու սահմանափակ պայմաններով , ինչո՞ւ անտես արաւ նա այսպիսի դէպքում գէթ մի և նոյն սահմանափակ պայմաններով բանալու և բոլոր այն դպրոցներն , որոնք

այժմէն իսկ արդէն դադրած են նկատուած : Ի՞նչ հարկ կար ուրեմն նորա ներկայութեան, քանի որ առանց նորան եւս Ռուսահայերն կարող էին միջամտել Տէրութեան առաջ բոլոր փակուած դպրոցներն նորէն բանալու կառավարութենէն առաջարկուած պայմաններով : Վերջապէս մեզ հանելուկ է ներկայանում ուսումնարանական խնդրի ոյս ցաւալի կերպարանք առնելն՝ շնորհիւ Մակար կաթողիկոսի :

Վերեւ մենք յիշեցինք, որ Նորին Վեհափառութիւնն կարող էր ուսումնարանների փակման առաջն առնուլ, եթէ չը լինէր նորա փառասիրութիւնն :

Մակար, անկասկած, լաւ գիտէր, որ իւր ժամանակին եթէ ինքն միջամտեր կոյսեր մտա, մանաւանդ թագադրութեան օրերու մե, որ ինքն կաթողիկոսական Տեղապահ էր, իւր միջամտութիւնն դէթ մասամբ, եթէ ո՛չ ամբողջովին, կը յաջողուէր. սակայն որպէս իւր անձնականին համար հեռատես մարդ, նա գիտէր որ շուտով տեղի է ունենալու կաթողիկոսական բնտրութիւնն և իւր միջամտութիւնն վատ ազդեցութիւն կ'անէր Ռուս կառավարութեան վրայ նորա մասին, եթէ նա ևս կաթողիկոսացուների կարգն ընկնէր. ուստի որպէս փառասէր և եսական (ինքնաւեր) մարդ նա լաւ համարեց կանխօրէն իւր ապագայ կաթողիկոսութեան համար ծանապարհ բաց անել, քան թէ միջամտել այնպիսի մի կնճռոտ խնդրի, որպիսին է դպրոցականն, թէեւ մինչեւ իսկ յաջող հետեւանքի հասցնէր : Նա այդու կասկածելի անձնաւորութիւն դուրս դալով յաչս կառավարութեան, կաթողիկոսութեան ձգտելու ցանկութենէն օր առաջ պետք է հրաժարէր :

Մի բան ևս մեզ զարմացնում է : Վեհ. Մակարն կարգադրութիւն է արել ճեմարանի ներքին երեք դասարաններն ևս փակել : Քանի որ ո՛չ մի քաղաքում երեք դասարանեայ դպրոցներ չ'են մնացած, այլ ամենքն փակուած են, մենք չ'ենք հասկանում այդ նոր անսպասելի կարգադրութեան միտքն՝ թէ ի՞նչ է արեւոք ստիպել Մակարին փակել աւլ այդ դասարաններն :



Գ. — Թիֆլիզի Հայ Հասարակութեան Ներկայացուցչաց հեռագիրն առ Տ. Մակար Սրբազան :

Աստուածային Սուրբ Պատարագին ունկնդիր լինելուց յետոյ՝ Թիֆլիզի Հայ Հասարակութիւնն , Թեմակալ Առաջնորդի մօտ հաւաքուած , Ձերդ Վեհափառութեան մատուցանում է իւր ամենանկեղծ շնորհաւորութիւնն այսօրուան կրկնակի հանդիսակատարութեանց — Ս. Էջմիածնի Մայր Տաճարի տօնախմբութեան եւ Սուրբ Միւռոնի օրհնութեան առիթով : Ապաւինելով առ Աստուած , մենք լիայտոյս ենք , որ Ձերդ Վեհափառութեան ջանքերով կը բացուին մեր դպրոցների այսքան երկար ժամանակ փակ մնացած դռներն , որոց մէջ հայ մանկտին ըստ առաջնոյն կը կրթուի Ս. Եկեղեցւոյ հովանեաց տակ : Թիֆլիզի Հայ Հասարակութիւնն նոր ի նորոյ գործ կը դնէ իւր բոլոր ջանքն , որպէս զի Ռսուլմարանն նման այն ժամանակամիջոցին , երբ Թէմս կառավարում էր Ձերդ Սրբութիւնն , բարոյական եւ կրթութեան բարիքն սերմանէ Հայ մանկանց սրտին մէջ անմիջական յեկավարութեամբ արժանաւորագոյն Առաջնորդի թեմիս :

Ստորագրութիւնք

Աղեքսանդր Մատինեան (Թիֆլիզի Բաղարագլուխ) ,  
Իշխան Պետրոս Բեհբուդեան .

Սղեքսանդր Անանեան (Ատեն . Հայ Բարեգոր . Ընկ .  
Ժեներալ իշխան Աղեքսանդր Արդուբեան .

Լուսարսաբ Մէլիք-Բեգլարեան (Պետակ . խորհրդ .)

Իշխան Նապօրէօն Ամատունի (Կառավարիչ քա-  
ղաքային վարկի ընկերութեան) .

Դաւիթ Ղօրղանեան (Հաշտարար Դատաւոր) .

Բալաբէգ Մելիք-Ղարապէօզեան (Նախկին Պատգ.  
Ղարաբաղի թեմին) .

Միրայէլ Թամամշեան (Հոգաբ. Ներսիսեան Դըպ.)

Իշխան Կոստանդին Բենիբուդեան (հրապարակախօս)

Գրիգոր Շահբուդադեան (Տնօրէն առեւտ. Բանկ.)

Բժշկապետ Միրայէլ Շահպարունեան (Նախկին Ա-  
տենապետ Հայոց Ռուսուցջական Ժողովի)

Գեորգ Ծուրինեան (Պետ. Խորհրդ.) :

Աղէքսանդր Մանրաշեան (Թիֆլիսի Ա. կարգի  
վաճառական եւ անդամ զանազ. ընկերութ.)

Յւ. վհաննէս Ծովիանեան (Առաջին կարգի վաճա-  
ռական եւ սեղանաւոր) :

Ժ. Լեւեալ Ստեփաննոս Քիշմիշեան .

Ինժինէր Աղէքսանդր Եսայեան (Անդամ վարչու-  
թեան Տպագր. Ընկերութեան) .

Աբգար Յովհաննիսեան (Խմբագիր Արճագանքի) .

Ներսէս Արաբէգեան (Նախկին Պատգամաւոր  
Ղարաբաղի թեմին) .

Բժշկապետ Բաբանասեան .

Յարութիւն Թամամշեան (Նախկին անդամ Քաղա-  
քային վարչութեան) .

Աղէքսանդր Երէցեան (Հրապարակախօս) .

Մանդինեան (Ռուսուցիչ) .

Յակոբ Մելիքեան (վաճառականաց աւագ) :

Դ. — Հրովարտակ Աղէքսանդր Ա. Կայսեր Ռու-  
սիոյ : Սոյն օրինակ Կայսերական շատ վաւերագրեր

կարելի է յառաջ բերել . բայց այս մին ևս բաւական է ցոյց տալու համար՝ թէ ի՞նչ կը յայտարարէր Ալէքսանդր Առաջին Հայ Ազգին համար և ի՞նչ կը տընօրինէ այսօր Ալէքսանդր Երրորդ նոյն Ազգին Կրօնական և Կրթական իրաւանց դէմ :

### Ողորմութեամբն Աստուծոյ

Մեք Ալէքսանդր Առաջին , Կայսր եւ Ինքնակալ ամենայն Ռուսաց եւ այլն եւայլն :

Մեր Կայսերական ողորմութիւնն կը նուիրեմք մեր սիրելի եւ հաւատարիմ Հայոց Ազգին՝ ամեն կարգի եւ աստիճանի հպատակաց որք կը բնակին ի Վրաստան :

Վրաստանի մեր գլխաւոր Հրամանատարէն հաղորդուած տեղեկութիւններէն նշմարիտ հաճութեամբ տեսանք մեր սրտին հաճելի այն նոր ապացոյցն հաւատարիմ զգացմանց , զոր ամեն կարգի եւ աստիճանի Հայ հպատակք ի Վրաստան միշտ տածած են եւ կը տածեն առ Բարձր Հովանաւորութիւն Մեր , զոր միշտ ունեցած էմք Վրաստանի Հայոց բարւոյն եւ հոգատարութեան համար : Հայք սոյն անյողդողդ հաւատարմութեան զգացմունքն ցուցած են բազմադիմի փորձերով եւ հաւատարմութեամբ , երբ թեթեւամտութիւնն ու անբարեմտութիւնն նրկրտած են վրդովել մեր ի Վրաստան հաստատած անդորրութիւնն : Հայք խռովայոյզ պարագայից մէջ , միշտ եղած են հաստատ եւ անյողդողդ իրենց ջերմեռանդութեամբ առ Մեզ եւ առ Գահն Մեր , զոհելով իրենց ստացուածքն , իրենց ամեն միջոցներն


եւ մինչեւ իսկ իրենց կեանքն յօգուտ Մեր ծառայութեան եւ յօգուտ հասարակաց բարւոյն :

Վրաստանի մէջ բնակող բոլոր Հայոց Ազգի, ամեն կարգի եւ աստիճանի հպատակացս այս սրտովին հաւատարմութիւնն, նոցա ծառայութիւնքն ու քաջութիւնքն քաղցր պարտք կը դնեն Մեր վրայ յայտնել բոլոր աշխարհի Մեր իրաւացի երախտագիտութիւնն ու բարի կամեցողութիւնն առ Ազգն Հայոց : Թո՛ղ պահպանուի ուրեմն սոյն երախտագիտական յայտարարութիւնն ու վկայութիւնն ի յիշողութեան ապագայ սերնդոց : Մնամք միշտ առ նոսա ամենեսին կայսերական ողորմութեամբ բարեհաճ :

Տուեալ ի Տեպլից որ ի Բոհեմիա

15 Սեպտ. 1813 ,

ԱԼԷՔՍԱՆԴՐ





## Վ Ր Ի Պ Ա Կ Բ

---

Երեւ	Տ՝ւ	Սիււ	Ուիւ
44	25	Սկզբան	'ի սկզբան
28	2	Զատու թեան	Աղատու թեան
30	3	Ոյժ տուած է	Ոյժ տրուած է
32	33	Ամենան յինչ	Ամենայն ինչ
36	40	Զ'ա՞նհետեր	Զ'ա՞նհետիր
58	13	Ամենայնի	Ամենայնիւ
68	40	Յայտարարուքեան	Յայտարարու թեան



1875

Year	Jan	Feb	Mar	Apr	May	June	July	Aug	Sept	Oct	Nov	Dec	Total
1875	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1876	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26
1877	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39
1878	40	41	42	43	44	45	46	47	48	49	50	51	52

Գին 5 դրոշ

